

Հայաստանի Հանրապետության Ազգային զեկուլյցը

ՄԱԿ-ի կանանց կարգավիճակի հանձնաժողովի
49-րդ նստաշրջանում,
Նյու Յորք 28 փետրվար - 11 մարտ 2005 թ.

1995թ. Պեկինում կայացած Կանանց IV համաշխարհային կոնֆերանսում միաձայն ընդունված հռչակագիրը և գործողությունների ծրագիրը, ինչպես նաև Հազարամյակի հռչակագիրը վերահաստատեցին կառավարությունների պատասխանատվությունը կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման, ինչպես նաև պետությունների քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կյանքում կանանց և տղամարդկանց հավասար մասնակցության ապահովման գործում:

Հայաստանի Հանրապետությունը, ինչպես նորանկախ այլ պետություններ, անցումային շրջանում մեծ դժվարությունների հանդիպեց: Հետպեկինյան ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունը շարունակեց դիմագրավել Ադրբեջանի և Թուրքիայի կողմից առ այսօր շարունակվող տնտեսական շրջափակման, Լեռնային Ղարաբաղի հակամարտության և հանրապետության տարածքում տեղի ունեցած ավերիչ երկարաշարժի հետևանքներից ու մեծաթիվ փախստականների առկայությունից բխող խնդիրներին: Այս իրավիճակում Հայաստանի Հանրապետության առջև ծառայած բազմաթիվ խնդիրների ուղղությամբ իրականացվեցին մի շարք միջոցառումներ՝ միտված կանանց վիճակի բարելավմանը:

Պեկինյան գործողությունների պլատֆորմի շրջանակներում հանրապետությունում գեղեցիկ քաղաքականության զարգացման նպատակով ընդունվեցին ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման ծրագրի հիմնադրույթների մասին» թիվ 242 (15.04.1998թ.) և «Հայաստանի Հանրապետությունում 1998-2000թթ. կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 406 (26.06. 1998թ.) որոշումները:

Այս երկու փաստաթղթերը նպատակաուղղված էին Հայաստանի Հանրապետությունում կանանց իրավունքների և հիմնական ազատությունների, պետական կառավարման մարմիններում կանանց մասնակցության երաշխիքների ապահովմանը և մայրության ու մանկան առողջության պահպանմանը:

Չնայած այն հանգամանքին, որ ազգային ծրագրով նախատեսված որոշ միջոցառումներ կատարվեցին (անցկացվեց ՀՀ օրենսդրության գեղեցիկ փորձաքնն-

նություն, ուսումնասիրություններ կատարվեցին և առաջարկություններ մշակվեցին կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի, ինչպես նաև որոշումների կայացման մակարդակներում կանանց թվի ընդլայնման վերաբերյալ, գենդերային վիճակագրության սկիզբ դրվեց, որի արդյունքում հրատարակվեցին վիճակագրական տեղեկատուներ), սակայն ընդհանուր առմամբ ծրագիրը մնաց անավարտ: Պատճառը ոչ բավարար ֆինանսավորումն էր, ինչպես նաև իրականացման հստակ մեխանիզմների և տարբեր գերատեսչությունների գործունեության համակարգման բացակայությունը: Իհարկե, լուրջ խոչընդոտ էր նաև բնակչության իրազեկության բավական ցածր մակարդակը:

Կանանց շրջանում իրազեկության և իրավական գրագիտության բարելավման նպատակով 2001 թվականից ի վեր ՄԱԿ-ի Կանանց զարգացման հիմնադրամի (UNIFEM) հետ համատեղ իրականացվել է «Կանայք հանուն հակամարտությունների կարգավորման և խաղաղության հաստատման Հարավային Կովկասում» տարածաշրջանային ծրագիրը, որի շրջանակներում վերապատրաստում են անցել տարբեր գերատեսչությունների, սոցիալական ծառայության և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներ:

ՀՀ կառավարության 2002թ. սեպտեմբերի 25-ի թիվ 550-Ա որոշմամբ ստեղծվել է Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագիր մշակող միջգերատեսչական հանձնաժողով՝ ՀՀ սոցիալական ապահովության փոխնախարարի գլխավորությամբ:

2004թ. ապրիլի 8-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010թթ. ազգային ծրագիրը և Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010թթ. ազգային ծրագրի միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 645-Ն որոշումը (այսուհետ՝ Ծրագիր):

Ծրագիրը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում կանանց հիմնախնդիրների լուծման ուղղությամբ տարվող պետական քաղաքականության սկզբունքները, առաջնահերթությունները և հիմնական ուղղությունները: Ծրագիրը հիմնված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համապատասխան դրույթների վրա և նպատակաուղղված է ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի, Պեկինի 4-րդ համաժողովի (1995թ.) հանձնարարականների, Եվրախորհրդի Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հանձնաժողովի փաստաթղթերի, ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագրի պահանջների և միջազգային այլ փաստաթղթերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարմանը:

Ծրագիրը նպաստելու է կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովմանը, որը ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն կառուցելու և քաղաքացիական հասարակություն կերտելու նա-

խաայայման է: Ծրագրի շրջանակներում իրականացվող գործողությունները նպաստելու են նաև կանանց սոցիալտնտեսական հարցերի կարգավորմանը՝ դրանով իսկ նպաստելով Ադրատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրականացմանը:

Ծրագիրը բաղկացած է 8 բաժիններից և նախատեսում է համապատասխան միջոցառումների իրականացում հետևյալ ոլորտներում.

- կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովում,
- կանանց սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում,
- կրթության ոլորտ,
- կանանց առողջական վիճակի բարելավում,
- կնոջ նկատմամբ բռնության երևույթի վերացում,
- ՁԼՄ-ների և մշակութային հաստատությունների դերը կանանց հիմնահարցերի լուսաբանման և կնոջ օրինակելի կերպարի ձևավորման գործում,
- ինստիտուցիոնալ բարեփոխումներ:

Գենդերային վիճակագրություն

1999թ. հանրապետությունում սկսվեցին լայնածավալ աշխատանքներ՝ ուղղված գենդերային վիճակագրական տվյալների հավաքմանը, վերլուծությանը և վիճակագրական տեղեկագրերում գենդերային ցուցանիշների ներմուծմանը:

Սկսած 1999 թվականից՝ պարբերաբար հրատարակվում է «Հայաստանի կանայք և տղամարդիկ» վիճակագրական գրքույկը: 2000թ. լույս է տեսել նաև «Ընտանիքը և երեխաները Հայաստանում» վիճակագրական վերլուծական տեղեկագիրը: Տվյալ տեղեկատուներում ներառված են վիճակագրական տվյալներ առողջապահության, սոցիալական ապահովության և ապահովագրության, ընտանիքի ու տնային տնտեսությունների, կրթության, աշխատաշուկայի ու զբաղվածության և իրավախախտումների մասին:

Գենդերային վիճակագրությունը՝ որպես համեմատաբար նոր ոլորտ Հայաստանում, հետագա զարգացման և կատարելագործման, տեղեկատվության վարչական աղբյուրների բարելավման և նոր գենդերային ցուցանիշների ներառման կարիք ունի:

Ներկայումս գյուղատնտեսության, ձեռնարկատիրության, քաբնված զբաղվածության, աշխատաժամանակի օգտագործման, բռնության, թրաֆիկինգի և անօրինական միգրացիայի ոլորտներում գենդերային վիճակագրություն չի տարվում:

I. Կանանց իրավունքները մարդու իրավունքների և ազատությունների համատեքստում

Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ-ի անդամ դառնալուց հետո վավերացրել է մարդու իրավունքները և ազատությունները կարգավորող հետևյալ միջազգային փաստաթղթերը.

- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1979թ. դեկտեմբերի 18-ին, իսկ ՀՀ-ի կողմից վավերացվել է 1993 թ. հունիսի 9-ին),
- Աշխատանքի և զբաղվածության բնագավառում խտրականության մասին կոնվենցիա (ընդունվել է Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից 1958թ. հունիսի 25-ին, ՀՀ-ի կողմից վավերացվել է 1993թ. դեկտեմբերի 21-ին),
- Կանանց և տղամարդկանց համարժեք աշխատանքի դիմաց հավասար վարձատրության մասին կոնվենցիա (ընդունվել է Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից 1951թ. հունիսի 29-ին, ՀՀ-ի կողմից վավերացվել է 1993թ. դեկտեմբերի 21-ին),
- Ամուսնացած կնոջ քաղաքացիության մասին կոնվենցիա (ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1957թ. հունվարի 29-ին, ՀՀ-ի կողմից վավերացվել է 1994թ. մարտի 16-ին),
- Կրթության ոլորտում խտրականության դեմ պայքարի մասին ՅուՆԵՍԿՕ-ի կոնվենցիան (ընդունվել է 1960թ., դեկտեմբերի 14-ին, ՀՀ-ի կողմից վավերացվել է 1994թ. մարտի 16-ին):

2003թ. մարտի 25-ին ՀՀ-ն վավերացրել է ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցագործության դեմ կոնվենցիան և կոնվենցիային կից Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխման և պատժի վերաբերյալ, Օդով, ջրով և ցամաքով միգրանտների անօրինական փոխադրումների դեմ արձանագրությունները:

2003թ. դեկտեմբերի 25-ին ՀՀ-ն միացել է վերանայված Եվրոպական սոցիալական խարտիային (3 մայիսի, 1996թ.), որի մի շարք հոդվածներով ամրագրվում են կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներն ու հավասար հնարավորությունները: Կանանց համար որոշակի արտոնություն է սահմանված ՀՀ Ընտրական օրենսգիրքով (1999թ), ըստ որի՝ համամասնական ընտրակարգով կուսակցությունների նախընտրական ցուցակներում կանանց ընդգրկվածությունը 5 տոկոսից պակաս չպիտի լինի, իսկ ԱԺ-ի կողմից մշակված նախագծով այդ քվոտան հասել է 25 տոկոսի:

Հայաստանի Հանրապետության ներկայիս օրենսդրության մեջ կանանց և տղամարդկանց նկատմամբ խտրականություն նախատեսող հոդվածներ չկան, քանի որ հիմնականում ավանդույթով ժառանգված որիորդային պետության օրենսդրությունը ուներ ընդգծված կանանց ուղղված արտոնությունների մի շարք համակարգեր: Սակայն նրանց մի մասը չէր իրականացվում համապատասխան ռեսուրսներով ապահովված շիֆեյլու պատճառով:

Հանրապետությունում վերջին տասնամյակում օրենսդրական դաշտում կատարված փոփոխություններն ու լրացումները մի կողմից օրենսդրությամբ կարգավորեցին ու սահմանեցին սույլ իրատեսական նորմեր ելնելով միջազգային կոնվենցիաների թելադրանքներից, մյուս կողմից ստեղծվեցին համակարգեր, կատարվեց կադրային համալրում, կազմակերպվեցին կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներ, որոնք լիովին ապահովում և կարգավորում են կանանց իրավունքների և շահերի պաշտպանությունը (սոցիալական ծառայություններ զբաղվածության գործակալություն և այլն):

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը (19.11.2002թ.) ապահովում է սեռային հավասարությունը՝ սահմանելով, որ տարիքային կենսաթոշակի իրավունք ունի 63 տարին լրացած անձը:

Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունն աշխատանքի, աշխատավարձի և զբաղվածության ոլորտում կարգավորվում է ՀՀ Աշխատանքային օրենսգրքով (2004թ. հունիսի 21), ինչպես նաև «Աշխատանքի վարձատրության մասին» (2001թ.), «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» (2002թ.) ՀՀ օրենքներով:

Աշխատանքի պետական կարգավորման, քաղաքացիների աշխատանքային իրավունքների՝ մասնավորապես աշխատանքի վայրում կանանց իրավունքների պաշտպանության, սեռային հավասարության ապահովման նպատակով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում 2004 թվականի սեպտեմբերին ստեղծվել է ՀՀ աշխատանքի պետական տեսչություն՝ այդ մարմնի վրա դնելով խորհրդատվական ու վերահսկողական լայն լիազորություններ:

Արդեն ՀՀ կառավարություն են ներկայացվել «Աշխատանքի պետական տեսչության մասին», «Պարտադիր սոցիալական ապահովագրության մասին», «Արտադրությունում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր ապահովագրության մասին», «Ապահովագրության սակագնի սահմանման մասին», «Միջոցների կապիտալացման մասին», «Կամավոր աշխատանքի և օգնություն ցուցաբերելու աշխատանքների կատարման կարգի ու պայմանների մասին» ՀՀ օրենքների նախագծերը: Դրա հետ մեկտեղ մշակվել և մշակվում են աշխատանքային օրենսդրությունից բխող շուրջ 15 ենթաօրենսդրական ակտերի նախագծեր:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում, որը համահունչ է միջազգային նորմերին, նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացու ամուսնությունն օտարերկրյա քաղաքացու հետ չի առաջացնում քաղաքացիության փոփոխություն, ամուսիններից մեկի քաղաքացիության փոփոխությունը չի առաջացնում մյուսի քաղաքացիության փոփոխություն:

1996թ. ՀՀ առողջապահության նախարարության կոլեգիայի կողմից հաստատվել է «Վերարտադրողական առողջության բարելավման ազգային ծրագիրը», որի առանձին բաղադրիչների իրականացումն սկսվել է 1997 թվականից:

1995թ. հետո ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2000թ. կանանց հիմնահարցերին նվիրված հատուկ նստաշրջանի կողմից ընդունված «Պեկին +5» հռչակագրի, 2001թ.

ընդունված ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագրի, ինչպես նաև 2001թ. Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) Եվրոպական գրասենյակի կողմից ընդունված «Վերարտադրողական և սեռական առողջության տարածաշրջանային ռազմավարության» դրույթների հիման վրա մշակվեցին և ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեցին «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» և «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքները: 2003-2004թթ ընթացքում ՀՀ կառավարության կողմից ընդունվեցին «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքից բխող մի շարք որոշումներ՝ ուղղված վերարտադրողական առողջության բարելավմանն ու վերարտադրողական իրավունքների պահպանմանը:

2003թ. օգոստոսի 1-ից ուժի մեջ է մտել նոր ՀՀ Քրեական օրենսգիրքը, որում ընդգրկվել է նոր գլուխ՝ «Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունները» (20-րդ գլուխ) և 168-րդ հոդվածը՝ «Երեխայի առք ու վաճառք»: Մարդկանց առևտուրը նույնպես ընդգրկվել է որպես առանձին հանցատեսակ:

II. Ինստիտուցիոնալ մեխանիզմների զարգացումը

Ներկայումս հանրապետությունում կանանց հիմնահարցերով զբաղվում է ՀՀ սոցիալական ապահովության նախարարությունում 1997թ. ստեղծված Կանանց և երեխաների հիմնահարցերի վարչությունը, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության համակարգում գործող մոր և մանկան առողջության պաշտպանության բաժինը: «Հայաստանի Հանրապետությունում 1998-2000թթ. կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագրի» իրականացման նպատակով 1997թ. վարչապետի որոշումով ստեղծվել էր նաև հանձնաժողով: Դա կանանց վիճակի բարելավման երեք տարվա ծրագիր էր: 2000թ. ստեղծվեց ՀՀ վարչապետին կից Կանանց խորհուրդ, որը գործում է հասարակական հիմունքներով և խորհրդակցական բնույթ ունի: 2002թ. ՀՀ սոցիալական ապահովության նախարարությունում նշանակվեց փոխնախարար, որը համակարգում է կանանց խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքները: 2003 թվականին նշանակվեց ՀՀ վարչապետի խորհրդական կանանց հիմնախնդիրները համակարգելու համար:

2004թ. հանրապետությունում ձևավորվեց մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմեն) ինստիտուտը:

Սակայն այս բոլոր կառույցները լուծում են սոցիալական, առողջապահական, զբաղվածության հետ կապված հարցեր և կանանց հիմնախնդիրների լուծմանը, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված արդյունավետ քաղաքականություն մշակելու և իրականացնելու համար բավականաչափ ռեսուրսներ և լիազորություններ չունեն:

Այսպիսով, մի նոր կառույցի ստեղծման կամ եղած կառույցի լիազորություններ-

րի ավելացման անհրաժեշտություն է առաջանում, որը իրականացնի կանանց հիմնախնդիրների լուծմանն ուղղված նպատակային ծրագրեր, համակարգի և վերահսկի գործադիր իշխանության մարմիններում կանանց հիմնահարցերին վերաբերող գործունեությունը, ներկայացնի առաջարկներ՝ ուղղված կանանց հիմնախնդիրների իրավական կարգավորմանը, համագործակցի օրենսդիր և դատական իշխանությունների, ինչպես նաև ոչ կառավարական կազմակերպությունների հետ:

Նման մոտեցումը համապատասխանում է նաև միջազգային չափորոշիչներին և քիսում է Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններից:

«Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010թթ. ազգային ծրագրի» դրույթներով նախատեսվում է.

- մշակել առաջարկություններ կանանց հարցերը համակարգող պետական մարմին ստեղծելու համար, որը կհամակարգի և կվերահսկի գործադիր իշխանության մարմիններում կանանց հիմնահարցերին առնչվող գործունեությունը,
- նպաստել կառավարության, ՀԿ-ների և միջազգային կառույցների սոցիալական գործընկերության քաղաքականության զարգացմանը:

III. Որոշում կայացնելու մակարդակներում կանանց և տղամարդկանց հավասար մասնակցության ապահովումը

ՀՀ կողմից 1993թ վավերացրած «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի 7րդ հոդվածի՝ իշխանությունները պարտավորվել են գործնական քայլեր ձեռնարկել պետական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում կանանց և տղամարդկանց հավասար մասնակցությունն ապահովելու համար:

2001թ.-ին ընդունվեց «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը, որով ստեղծվել է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ և պետական պաշտոններ զբաղեցնել ցանկացողների համար ստեղծված է մրցութային համակարգ՝ հավասար իրավունքներ և հնարավորություններ ապահովելով տղամարդկանց և կանանց համար:

2003թ. Հայաստանի Հանրապետության խորհրդարանական ընտրությունների արդյունքում կանայք ՀՀ Ազգային ժողովում կազմում են 4,1%: 6 կին պատգամավորներից մեկն ընտրվել է մեծամասնական ցուցակով, 5-ը՝ համամասնական: Կին պատգամավորներից մեկը մշտական հանձնաժողովի նախագահ է: Կանայք մեծամասնական ցուցակներում կազմում էին 4%, իսկ համամասնական ցուցակներում՝ 14,1%: Հետևաբար կարելի է եզրակացնել, որ կանանց փոքր թիվը ՀՀ Ազգային ժողովում պայմանավորված է նաև ընտրություններին նրանց նույնքան փոքրաթիվ

մասնակցությամբ:

Սահմանափակ է ղեկավար կանանց թիվը նաև գործադիր իշխանության մարմիններում. կա ընդամենը 3 կին փոխնախարար:

Նույն պատկերն է նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում: 2002թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում 932 կին թեկնածուներից ընտրվել են 8-ը:

Այնուհանդերձ կանանց և տղամարդկանց հավասարաչափ մասնակցությունն ապահովված է կառավարման միջին օղակներում, ինչպես նաև Հայաստանում գործող միջազգային կազմակերպություններում: Կանայք գերակշռում են մասնավորապես սոցիալական, կրթության, առողջապահության, մշակույթի և սպասարկման ոլորտներում:

Իսկ որոշումներ կայացնելու իրավունքը կանայք հիմնականում իրականացնում են ոչ կառավարական կազմակերպությունների միջոցով, ժողովրդավարական և կայուն քաղաքացիական հասարակություն ձևավորելու հարցում կնոջ և կանանց կազմակերպությունների դերը հետզհետե մեծանում է:

IV. Կինը և աղքատությունը

Ներկայումս աղքատության հաղթահարումը համարվում է միջազգային հանրության առջև ծառայած առաջնային խնդիրներից մեկը: Սեր հանրապետության համար ևս այն գերխնդիր է: Անկախ Հայաստանը սկզբից ևեթ ծանր իրավիճակի մեջ հայտնվեց: ՍՀՄ-ի փլուզմամբ և համակարգային փոփոխություններով պայմանավորված հիմնախնդիրներից գատ, որոնք առկա էին նաև մյուս նորանկախ պետություններում, Հայաստանի կառավարությունը հարկադրված էր լուծումներ գտնել այնպիսի հարցերի համար, ինչպիսիք էին Ադրբեջանից հազարավոր փախստականների պատսպարումը, 1988թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետևանքների հաղթահարումը, արցախյան հակամարտության պատճառով Ադրբեջանի կողմից Հայաստանի սահմանամերձ տարածքների ավերածությունների վերականգնումը և այլն: Վիճակն էլ ավելի էր բարդանում հանրապետության տրանսպորտային շրջափակման, նախկին տնտեսական կապերի լիակատար խզման, բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկությունների գործունեության դադարեցման, կազմալուծման և այլ կործանարար գործոնների ազդեցությամբ:

Նշված և այլ անցանկալի զարգացումների հետևանքը 90-ական թվականներին Հայաստանի Հանրապետության տնտեսական ու սոցիալական կտրուկ անկումն էր, որի դրսևորումներից էին բնակչության զանգվածային աղքատացումը, եկամուտների անհավասարությունը և հասարակության՝ տազնապալի չափերի հասնող բևեռացումն ու բնակչության միգրացիան:

Ըստ ՄԱԶԾ-ի գնահատականների՝ աշխարհում աղքատների 70%-ը կանայք են, և շուկայական տնտեսության անցման ժամանակաշրջանում կանայք հայտնվում

են շատ ավելի անբարենպաստ պայմաններում, քան տղամարդիկ, ավելի երկար են գտնվում այդ վիճակում և աղքատության դեմ պայքարելիս ավելի հաճախ են խոչընդոտների հանդիպում:

Ներկայումս, ըստ վիճակագրական տվյալների, Հայաստանում աղքատների ընդհանուր թվի 53%-ը կազմում են կանայք: Սեռատարիքային վերլուծությունը ցույց է տալիս, որ կանայք ավելի հաճախ են հայտնվում աղքատության մեջ, քան տղամարդիկ: Սակայն աղքատության ռիսկը կանանց համար նույնքան մեծ է, որքան տղամարդկանց համար:

Պատկերն այլ է, երբ խոսքը վերաբերում է կանանց կողմից գլխավորած տնային տնտեսություններին, որոնց դեպքում ծայրաստիճան աղքատության մեջ հայտնվելու ռիսկը 33%-ով գերազանցում է նման ռիսկի հավանականությունն այլ տնային տնտեսությունների համար: Այդ երևույթի հիմնական պատճառը տղամարդկանց համեմատ կանանց զբաղակառության շատ ավելի ցածր մակարդակն է: Ընտանիքի հիմնական կերակրողի՝ տղամարդու բացակայության պատճառով աղքատության ռիսկը կանանց կողմից գլխավորվող տնային տնտեսությունների համար մեծանում է: 2004թ. երկրորդ կիսամյակի տվյալներով, ընտանեկան անապահովության գնահատման համակարգում փաստագրվել են շուրջ 12590 միայնակ մոր, 9672 ամուսնալուծված (կին), 17487 միակողմանի ծնողագուրկ (կնոջ կողմից ղեկավարվող), 43030 չորս և ավելի երեխաներ ունեցող ընտանիքներ:

Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ՀՀ կառավարությունը վերջին տարիներին ձեռնարկել է մի շարք քայլեր:

- 2003թ. օգոստոսի 8-ին ՀՀ կառավարության թիվ 994-Ն որոշմամբ հաստատվել է «ՀՀ աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը», որն ուղղված է առավել խոցելի և պետության հոգացության կարիքն ունեցող մարդկանց համար բավարար կենսապայմանների ստեղծմանը:
- 2002թ. աղքատության ընտանեկան նպաստի միջոցներն ուղղվել են աղքատ ընտանիքների անչափահաս անդամներին, 2003թ. հուլիսից աղքատության ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքի անչափահաս անդամին տրվող հավելումը սահմանվել է 2000 դրամ՝ 1500-ի փոխարեն:
- 2003թ. հոկտեմբերից երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող միանվագ գումարը սահմանվել է 35 հազար դրամ՝ 5900 -ի փոխարեն:

Սոցիալական ծառայության ոլորտում ևս իրականացվել են բարեփոխումներ. ավելի քան 10 տարի է, ինչ ներդրվել է սոցիալական ծառայության ընտանեկան անապահովության գնահատման համակարգը: 2003 թվականի օգոստոսի 8-ին ընդունված ՀՀ կառավարության 2004-2015թթ. աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի թելադրանքներից ելնելով, հիմնվելով տնային տնտեսությունների բյուջեների հետազոտությունների արդյունքների վրա, նախ, 25 տոկոսով ավելացվել է 2004, 2005 թվականների ընտանեկան նպաստների համար հատկացվող բյուջեները, ու այդ գումարները հիմնականում ուղղորդվել են երեխաներ ունեցող կարիքավոր ընտանիքներին, ընդ որում բազմազավակ ընտանիքները ստանում են առավելագույնը:

Հանրապետությունում այսօր գործում են 55 սոցիալական ծառայության տարածքային գործակալություններ, որոնցում աշխատող կանանց թիվը կազմում է 67 տոկոս: Պարբերաբար ձեռնարկվում են համապատասխան միջոցառումներ համակարգի գործունեության շրջանակների ընդլայնման և տրամադրվող ծառայությունների որակի բարձրացման ուղղությամբ:

V. Կինը և տնտեսությունը

Վերջին տարիներին հանրապետությունում արձանագրվել է տնտեսության զարգացման աճ, բյուջետային ոլորտում առկա աշխատավարձի, նպաստների, կենսաթոշակների, կրթաթոշակների որոշակի աճ: 2005թ. պետական բյուջեն սոցիալական ուղղվածություն ունի, ՀՀ կառավարությունն իրականացնում է սոցիալ-տնտեսական ոլորտի զարգացման քաղաքականություն:

1. Հավասար իրավունքների ապահովումը աշխատանքի և զբաղվածության ոլորտում

Աշխատանքի ոլորտի պետական կարգավորման գործընթացում կարևոր նշանակություն ունի գենդերային մոտեցումը: Հանրապետությունում աշխատանքի ոլորտում իրականացվող գենդերային քաղաքականության հիմնական սկզբունքն ամրագրված է ՀՀ Աշխատանքային օրենսգրքում և «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքում: Աշխատանքի պետական կարգավորման քաղաքականությունը նպաստել է աշխատանքի արտադրողականության բարձրացմանը և աշխատանքի որակի բարելավմանը: Կարևոր գործառույթներից է նաև աշխատանքային իրավահարաբերությունների նկատմամբ հսկողություն իրականացնող մարմնի՝ աշխատանքի պետական տեսչության ստեղծումը: Աշխատանքի ոլորտում վերը նշված բարեփոխումները նպաստել են հանրապետությունում գործարարության կազմակերպմանը և ծավալմանը, ներդրումային իրավիճակի և մակրոտնտեսական ցուցանիշների բարելավմանը, ինչպես նաև գենդերային անհամաչափությունների կանխարգելմանը:

Այսպես, 2004 թվականին ընդունված ՀՀ Աշխատանքային օրենսգիրքը հնարավորություն է տալիս կնքելու կոլեկտիվ պայմանագրեր աշխատավորների կոլեկտիվների և գործատուների միջև, սահմանելու տարիֆա-որակավորման սանդղակներ, տղամարդկանց և կանանց միևնույն կամ համարժեք աշխատանքի դիմաց վճարելու նույնքան աշխատավարձ, իրականացնելու մայրության պաշտպանություն, ապահովելու արտոնություններ հղի և երեխա խնամող կանանց համար: Ներկայումս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում աշխատանք է տարվում կոլեկտիվ և անհատական աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերի, ինչպես նաև սոցիալական գործընկերների (արհմիությունների, գոր-

ծատունների, պետական կառավարման մարմնի) միջև բանակցությունների վարման ընթացակարգերի մշակման ուղղությամբ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործող աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտը կազմակերպություններին, գործարարներին, արհեստակցական միություններին աշխատանքի, աշխատավարձի կազմակերպման վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն և տեղեկատվություն է տրամադրում:

Աշխատանքի պետական տեսչությունը իրականացնում է աշխատողների աշխատանքային իրավունքների պաշտպանության, աշխատանքային պայմանների նկատմամբ վերահսկողության, ձեռնարկություններում թաքնված կամ անօրինական աշխատողների հայտնաբերման գործառնություններ, ինչպես նաև աշխատավայրում սեռային հատկանիշով պայմանավորված խտրականության դեպքերի ուսումնասիրում և աշխատողների խախտված իրավունքների պաշտպանության համար միջոցների ձեռնարկում, աշխատողի ազգությամբ, սեռով, դավանանքով կամ այլ հատկանիշներով պայմանավորված աշխատանքի ընդունման և ազատման հետ կապված հարցերի քննություն, վնասակար և ծանր աշխատանքում կանանց աշխատանքի բացառում:

2004թ. նոյեմբերին Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, գործարարների և արդյունաբերողների միության, արհմիությունների կոնֆեդերացիայի ու Աշխատանքի միջազգային կազմակերպության միջև ստորագրվեց 2004-2006թթ. տեխնիկական աջակցության և համագործակցության ծրագիր: Հատկանշանական է, որ արտադրությունում կանանց վիճակի բարելավման և գենդերային հավասարության ապահովման նպատակով այդ ծրագրի շրջանակներում, որպես միջոցառում, ընդգրկված են նաև սոցիալական երկխոսության համակարգում գենդերային հիմնախնդիրների ներառումը և կոլեկտիվ բանակցությունների ու համաձայնությունների առավել արդյունավետ օգտագործումը:

Եթե 1999թ. կանայք կազմել են տնտեսության մեջ զբաղվածների 46,9%-ը, ապա 2003թ. կազմել են 47,5% : Աճել է նաև կանանց տեսակարար կշիռը կառավարման ապարատում. եթե 1999թ. այն կազմել է զբաղված կանանց 1,8%-ը, ապա 2003թ.՝ 1,9%-ը:

Գործազուրկ կանանց թիվը հանրապետությունում 2004թ. նոյեմբերի 1-ի դրությամբ կազմում է 78,0 հազ. մարդ: Գործազուրկների թվի մեջ կանանց տեսակարար կշիռը շարունակում է մնալ բարձր և կազմում է 70,0%: Գործազուրկ կանանց թվի մեջ մեծ է քաղաքային բնակչության տեսակարար կշիռը, որը կազմում է 94%: Գործազուրկ կանանց կրթական մակարդակը հետևյալն է. բարձրագույն կրթություն ունեցողները կազմում են 11,9%, միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողները՝ 23,7%, ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողները՝ 60%, թերի միջնակարգ ունեցողները՝ 4,4%: Մինչև 18 տարեկանները կազմում են գործազուրկ կանանց 0,2%-ը, 18-22 տարեկանները՝ 4,9%-ը, 22-30 տարեկանները՝ 20%-ը, 30-50 տարեկանները՝ 66%-ը, 50-ից բարձր տարիքի կանայք 8,9%-ը:

Աշխատանքի տեղավորման հարցում հատկապես դժվարություններ ունեն 50-

ից բարձր տարիքի կանայք, որոնք դժվար են հարմարվում նոր տնտեսական հարաբերություններին, հոգեբանորեն պատրաստ չեն վերամասնագիտանալու և նոր գործ սկսելու: Գործատուներն իրենց հերթին աշխատողներ ընդունելիս նախապատվությունը տալիս են 18-30 տարեկան անձանց: Անգամ կրթություն և մասնագիտություն ունեցող 30-50 և 50-ից բարձր տարիքի կանայք աշխատաշուկայում դարձել են անմրցունակ ժամանակակից պահանջներից բխող որակավորում չունենալու պատճառով:

1998-2004թթ. ընթացքում «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության միջոցով աշխատանքի է տեղավորվել շուրջ 29709 կին:

Աշխատուժի առաջարկի և պահանջարկի անհամապատասխանությունը մեղմելու նպատակով «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության միջոցով 1998-2004թթ. ընթացքում հետևյալ մասնագիտություններով մասնագիտական ուսուցում է անցել 2348 կին. հաշվապահություն, փոքր բիզնեսի կազմակերպում, ֆերմերային գործ, համակարգչային դիզայն և հրատարակչություն, թանկարժեք քարերի մշակում, համակարգչային գործավարություն, համակարգչի գործավար և ռեֆերենտ օգնական, դերձակություն, գորգագործություն: Նրանց 90%-ը տեղավորվել է աշխատանքի: Դերձակության և գորգագործության ուսուցումը կազմակերպվել է միայն կանանց համար:

1998-2004թթ. 237 հաշմանդամ կանանց համար կազմակերպվել է մասնագիտական ուսուցում՝ ոսկերչություն, համակարգչային գործավարություն, դերձակություն մասնագիտություններով: Նրանցից շուրջ 43,4%-ը տեղավորվել է աշխատանքի:

Կին ձեռներեցներին, ինչպես նաև ընտանեկան ձեռնարկության կազմակերպիչներին աջակցություն ցույց տալու նպատակով «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունը և նրա 51 տարածքային կենտրոնները իրականացրել են մի շարք միջոցառումներ: Այսպես, 1998-2004թթ. զբաղվածության ծառայությունը ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու ցանկություն հայտնած 97 կնոջ տրամադրել է անհատույց ֆինանսական միջոցներ:

Կանանց զբաղվածությունը ապահովող ծրագրերից է նաև հասարակական աշխատանքների կազմակերպումը: Այսպես 2001-2004թթ. «Դրամական նպաստ աշխատանքի դիմաց» ծրագրին մասնակցել է 1577 գործազուրկ կին, 1998-2004թթ. «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրով՝ 2266 կին:

2004թ հունվարի 1-ի դրությամբ գործազրկության նպաստ է ստանում 3309 գործազուրկ կին, դրամական օգնություն՝ 5216 կին:

2000թ. ընդունվել է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, ստեղծվել է ՓՄՁ աջակցության կենտրոն:

1997-2000թթ. իրականացվել է «Միկրոձեռնարկությունների զարգացում» ծրագիրը: Արդյունքում անհատական միկրոձեռնարկություններ ստեղծելու նպատակով 2600 անհատի տրամադրվել է բիզնես կառավարման ուսուցողական և ֆինանսական օժանդակություն: Ընդ որում դիմումները ուսումնասիրելիս առաջնություն է տրվել անհատական և փոքր ձեռնարկությունների կին ղեկավարներին:

Ծրագրի շրջանակներում 630 անձանց համար կազմակերպվել են միկրոձեռ-

նարկությունների կառավարման ուսուցողական դասընթացներ, տրամադրվել է 597 վարկ (ընդհանուր գումարը՝ \$712930): Երևանում և Գյումրիում մոտ 2000 անձինք, որոնց 44%-ը կանայք են, ուղղակի թե անուղղակի կերպով ստացել են համապատասխան ֆինանսական օժանդակություն:

1999-2000թթ. իրականացվել է նաև «Աջակցություն Հայաստանի փոքր և միջին ձեռնարկություններին» գերմանական ծրագիրը, որի նպատակն էր Հայաստանում կանանց ձեռնարկատիրության զարգացումը: Այդ կապակցությամբ իրականացվել են մի շարք միջոցառումներ.

- ապահովվել է կին ձեռներեցների մասնակցությունը ՓՄՁ քաղաքականության վերաբերյալ գործընկեր կազմակերպությունների հետ տարվող բանակցությունների գործընթացին,
- ապահովվել է համագործակցությունը կին ձեռնարկատերերի, ինչպես նաև կանանց բիզնեսն աջակցող ասոցիացիաների հետ՝ նրանց օժանդակելու նպատակով,
- հաստատվել են բիզնես կապեր հայ և գերմանացի ձեռնարկատերերի միջև՝ հատուկ ուշադրություն դարձնելով կին ձեռնարկատերերի ներգրավման խնդիրներին,
- հայ ձեռնարկատերերին տրամադրվել է բիզնես խորհրդատվական օգնություն ձեռնարկությունների կառավարման, մարկետինգի, արտահանման, խթանման և այլ հարցերի վերաբերյալ, այստեղ նույնպես առանձնակի ուշադրություն է դարձվել կին ձեռնարկատերերին,
- կազմակերպվել են բիզնես ուսուցողական և ձեռնարկատերերի (հատկապես կին ձեռնարկատերերի) վերապատրաստման դասընթացներ:

Ներկայումս ՀՀ մարզերում իրականացվում է «Արեգակ» միկրովարկային ծրագիրը, որի շահառուների հիմնական մասը կանայք են եղել:

«Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010թթ. ազգային ծրագրով» նախատեսվում են աշխատանքի և զբաղվածության ոլորտում կանանց վիճակի բարելավման հետևյալ միջոցառումները.

- մշակել և իրականացնել կանանց զբաղվածությունն ապահովող ծրագրեր բնակչության զբաղվածությանն աջակցող նպատակային ծրագրերի շրջանակներում,
- մշակել կանանց մասնագիտական որակավորման շարունակականությունն ապահովող մեխանիզմներ աշխատանքի շուկայում նրանց մրցունակության բարձրացման նպատակով՝ հաշվի առնելով ընտանեկան պարտականությունների հետ համատեղման հանգամանքը,
- «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» շրջանակներում իրականացնել կանանց աղքատության կրճատմանն ուղղված ծրագրեր, մասնավորապես արտոնյալ պայմաններով տրվող միկրովարկային ծրագրեր՝ նպաստելով կանանց կողմից ղեկավարվող փոքր և միջին բիզնեսի զարգացմանը,
- շարունակել աշխատանքը միջազգային դոնոր կազմակերպությունների ռեսուրսները փոքր ձեռնարկատիրության զարգացմանն ուղղելու նպատակով՝ կանանց հա-

մար կազմակերպելով հատուկ բիզնես դասընթացներ,

- իրականացնել կանանց զբաղվածությունն ապահովող ժողովրդական արվեստների և արհեստների զարգացմանն ուղղված նպատակային ծրագրեր:

2. Գյուղի կանայք

Հանրապետության տնտեսության ազատականացման, գյուղատնտեսության մեջ տնտեսական վերափոխումների, մասնավորապես հողի և գյուղատնտեսական արտադրության մյուս միջոցների, սպասարկող ենթակառուցվածքների, գյուղմթերքներ իրացնող և վերամշակող կազմակերպությունների մասնավորեցման արդյունքում, պայմանավորված օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով, ի հայտ եկան մի շարք դժվարություններ, հիմնականում սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում:

Գյուղի աշխատանքի զենդեռային բաշխման համատեքստում բեռը հավասարապես ընկնում է և՛ տղամարդկանց, և՛ կանանց վրա: Վիճակը մասնավորապես բարդ է սահմանամերձ գյուղերում, որտեղ հողերի մեծ մասը (60-70%-ը) վտանգավոր գոտիներում են, և դրանց մշակումը մեծ բարդությունների հետ է կապված:

Գյուղում առկա դժվարությունները պայմանավորված են աշխատունակների ցածր տեսակարար կշռով, բնակչության արտահոսքով, անցանկալի միգրացիոն երևույթներով, գրանցվածների թվի և գյուղում փաստացի բնակվողների անհամապատասխանությամբ, ոչ գյուղատնտեսական ոլորտներում զբաղվածության ապահովման սուղ հնարավորություններով, տարեց մարդկանց, հաշմանդամների և այլ կարգի անաշխատունակների բարձր տեսակարար կշռով, սահմանամերձ 187 բնակավայրերում մարդկանց կյանքի և աշխատանքային գործունեության վտանգվածությամբ, սպառման շուկաներից ունեցած մեծ հեռավորությամբ, ճանապարհների, մթերող-գնող-արտադրող ենթակառուցվածքների ոչ բավարար վիճակով, գյուղական բնակավայրերում անբավարար կենցաղային և բուժօգնության ծառայություններով, հասարակական սննդի օբյեկտների, առանձին մշակութային օջախների, շաղիկ-հեռուստահաղորդումների, լրագրերի ստացման, հեռախոսակապի, մսուր-մանկապարտեզների անմխիթար վիճակով և այլն:

Նշված դժվարությունները չափազանց բարդացնում են գյուղում կանանց աշխատանքը: Ընտանիքի ամբողջ ծանրությունն ու հոգսը ընկած է կնոջ ուսերին:

Ըստ ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքների՝ ՀՀ մշտական բնակչության թվաքանակը կազմել է 3213,0 հազ. մարդ, որից 2066,1 հազ.-ը կամ 64,3%-ը քաղաքային բնակչությունն է, իսկ 1146,9 հազ.-ը կամ 35,7%-ը բնակվում է գյուղական վայրերում:

Հանրապետությունում զբաղված բնակչության 46.0%-ը զբաղված է գյուղատնտեսության և անտառտնտեսության ոլորտում: Վերջիններիս 45,0%-ը կին է: Գյուղում աշխատող կանայք, բացի գյուղատնտեսությունից, հիմնականում զբաղված են մանկավարժության և բժշկական սպասարկման միջին օղակներում: Ցածր է գյուղի կանանց մասնագիտական որակավորման մակարդակը: Գյուղատնտեսները, անասնա-

բույժ-անասնաբույժները մեծ մասամբ տղամարդիկ են: Պայմանավորված տրանսպորտային, նյութական և մի շարք այլ դժվարություններով՝ հետզհետե պակասում է հանրապետության գյուղական բնակչության ընդգրկվածությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում և առհասարակ մասնագիտական կրթության ոլորտում:

Գյուղատնտեսության ոլորտում առկա է աշխատանքի գեներային բաժանման անհամաչափություն: Գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում անհրաժեշտ է հաշվի առնելով սեռային առանձնահատկությունները և առանձնապես շեշտադրել կանանց հիմնահարցերը, քանի որ գյուղի զարգացման գործում կանանց դերն այսօր ավելի է կարևորվում:

Կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ձեռնարկումները հնարավորինս նպատակաուղղվելու են այդ հիմնախնդիրների լուծմանը:

Հանրապետությունում Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD-ԳԶՄՀ) վարկի հաշվին, Գյուղատնտեսական ծառայությունների ծրագրի շրջանակներում գյուղատնտեսության բնագավառում կանանց հիմնահարցերի լուծման, մասնավորապես գյուղի կանանց աղքատության հաղթահարման, աշխատատեղերի ապահովման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները:

Ծրագրի «Գյուղատնտեսության զարգացում» բաղադրիչի մասով 2004թ. ուղղակի շահառուներ են հանդիսացել 446 ֆերմերներ, որոնց աջակցություն է ցույց տրվել պտղատու այգիներ հիմնելու գործում: Նրանցից 38-ը կամ 8,5%-ը կանայք են, մինչդեռ 2002թ. այդ ցուցանիշը կազմել է 4,6%: Կին շահառուների թիվը շուրջ 3 անգամ ավելին է:

Նշանակալի աշխատանքներ են իրականացվել ծրագրի մեկ այլ՝ «Ոռոգման զարգացում» բաղադրիչի մասով, մասնավորապես՝

- ոռոգման համակարգերի վերականգնման շնորհիվ բարձրացել է շուրջ 20 հազար գյուղացիական տնտեսությունների պատկանող 23,5 հազար հա հողատարածությունների ջրապահովման մակարդակը: Այդ տնտեսությունների կանանց թիվը շուրջ 23,8 հազար է, որոնց և կարելի է համարել ծրագրի շահառուներ,
- բաղադրիչն իրականացնելու արդյունքում հաշվարկելի է կին շահառուների թվաքանակը, որոնք հանդիսացել են ստեղծված 23 ջրօգտագործողների ընկերությունների (ՋՕԸ), 14 նախագծային կազմակերպությունների, «Ջմակ» ՊՀ-ի, «Ջրշին» ՊՓԲԸ-ի աշխատակազմի անդամներ: Այստեղ ընդգրկված է 155 կին: Ծրագրի «Գյուղացիական ֆինանսավորում» բաղադրիչով՝
- առ 01.10.2004թ. Հայգյուղփոխբանկի վարկառու է հանդիսացել 482 կին (վարկառուների ընդհանուր թվի 4%-ը, որոնք ստացել են 983 միավոր վարկ (վարկերի ընդհանուր թվի 5,8%-ը)՝ 655 հազար ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով (ընդհանուր գումարի 4,9%-ը): Այս ցուցանիշները գերազանցել են 2002թ. մակարդակը համապատասխանաբար՝ 2,2, 2,3 և 3,7 անգամ: Ծրագրով հիմնված «Հայգյուղփոխօգնություն» բանկի մարզային 2 մասնաճյուղերի աշխատա-

- կազմերում ընդգրկված է 8 կին (աշխատողների 35%-ը), առ 01.01.2005թ. «Անիվ» հիմնադրամի կողմից տրամադրված փոխառություններից 6-ի դեպքում փոխառու ձեռնարկությունների հիմնադիրները կանայք են, իսկ բիզնես ծրագրերով ամրագրված աշխատատեղերից 601-ում (39,7%) զբաղված են կանայք: «Անիվի» գրասենյակներում աշխատում է 3 կին (աշխատակազմի 18,7%-ը):

Ծրագրի «Համայնքային ենթակառուցվածքներ» բաղադրիչով առ 01.01.2005թ. 21 համայնքներում ավարտվել են սոցիալական նշանակության օբյեկտների վերանորոգման և վերականգնման աշխատանքները: Այս 21 համայնքներն ունեն 12585 գյուղացիական տնտեսություն, որտեղ բնակվում է շուրջ 25 հազար կին (այդ համայնքների բնակչության 51%-ը): 01.01.2003թ. դրությամբ աշխատանքներն ավարտվել են 6 համայնքում, որոնք ընդգրկում են 1499 տնտեսություն և շուրջ 3,1 հազար կին (51%):

«Ծրագրի կողողինացում» բաղադրիչը. ծրագրի կողողինացման 7 մարզային գրասենյակներում աշխատել է 18 կին (աշխատակազմի 30%-ը):

ԳՉՄՀ-ի աջակցությամբ իրականացվող «Ավանդական արհեստների վերականգնման միջոցով աղքատության կրճատմանն ուղղված կենսասակարգակի բարելավում» դրամաշնորհային ծրագրերում ընդգրկված է 30 կին:

Գյուղի կանանց գործունեությունը խթանելու նպատակով առաջին անգամ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից սահմանված «Գյուղատնտեսական նվաճումների համար» ոսկե մեդալով են պարգևատրվել հանրապետության 9 լավագույն ֆերմերներ, որոնցից 2-ը կին են՝ «Մուլտի ագրո» ՍՊԸ-ի նախագահ՝ Ռ. Ծառուկյանը և «Ռոդի Արմեն» ՍՊԸ-ի նախագահ Լ. Հարությունյանը:

2004թ. ապրիլին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարությունը», որի հիմնական նպատակն է նպաստել հանրապետության գյուղատնտեսության կայուն զարգացմանը, պարենային ապահովության մակարդակի բարձրացմանը և գյուղական բնակչության եկամտների ավելացմանը: Ռազմավարության դրույթների իրականացումը հնարավորություն կընձեռնի որոշակիորեն լուծելու գյուղատնտեսության առջև մի շարք հիմնախնդիրներ՝ արդյունքում կրճատելով աղքատությունը գյուղում և բարելավելով գյուղական բնակչության և հատկապես կանանց կենսապայմանները:

VI. Կանայք և կրթությունը

Հայաստանում կրթությունը ավանդաբար բարձր վարկանիշ է ունեցել: Տարրական կրթության ոլորտում աղջիկների և տղաների հավասար ընդգրկվածության ավանդույթները Հայաստանում գալիս են դեռևս 19-րդ դարից: որիդային տարիներին սահմանված կանանց և տղամարդկանց իրավունքների հավասարությունը պաշտպանվել և իրականացվել է կենսագործունեության տարբեր ոլորտներում: Ներկայումս պետական ու ազգային կարևորագույն խնդիր է համարվում կրթության

համակարգի պահպանումը և զարգացումը, միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը:

1995թ. ընդունված ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդվածում ամրագրված է, որ ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի ունի կրթության իրավունք, միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է, և յուրաքանչյուր քաղաքացի ունի պետական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք: 1999թ. ՀՀ Ազգային ժողովն ընդունել է «Կրթության մասին» ՀՀ օրենքը, որը, հիմնվելով սահմանադրական դրույթների վրա, որոշակիորեն ուղղորդում է կրթության համակարգի զարգացումը:

Տվյալ օրենքով ՀՀ-ն երաշխավորում է կրթության իրավունքը՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից: Այս օրենքում երաշխավորված է նաև կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը:

Վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանում կրթական տարբեր մակարդակներում սովորողների ընդգրկվածության առումով սեռային խտրականություն չկա: Այս տեսանկյունից, ըստ էության, հիմնախնդիրներ չկան: Այսպիսով Հայաստանում առկա իրողություն է ՄԱԿ-ի կողմից հռչակված Հազարամյակի զարգացման 3-րդ նպատակի (օժանդակություն սեռերի հավասարությանը և կանանց իրավունքների ընդլայնում) խնդիրներից մեկը, այն է՝ կրթության տարբեր մակարդակներում սեռերի միջև խտրականության վերացում (տարրական և միջնակարգ կրթության ոլորտում՝ մինչև 2005թ, իսկ մասնագիտական կրթության ոլորտում մինչև 2015թ.):

Նախադպրոցական հիմնարկներում հիմնականում կանայք են աշխատում: Հանրակրթական դպրոցներում մանկավարժների մեջ կանայք կազմում են 83,6%: Միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններում դասախոսների թվում նրանք 75% են կազմում, բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ 46,3%: Գիտահետազոտական աշխատանքներ և մշակումներ իրականացնող մասնագետների մեջ կանայք 45,3% են կազմում, գիտության ղոկտորների և գիտության թեկնածուների մեջ՝ համապատասխանաբար 17,5% և 40%:

Վերը նշված տվյալները վկայում են կրթության ոլորտում մանկավարժական համակազմի սեռային անհամամասնության մասին: Հատկապես հանրակրթության ոլորտում ակնառու է ֆեմինացումը (ուսուցիչների մոտ 84%-ը կին է): Կանանց գերակշռությունը կրթության ոլորտում, կարելի է ասել, ավանդական է: Սակայն իրավիճակը կտրուկ փոխվեց հատկապես 1993թ. ճգնաժամային տարիներին: Աշխատավարձի ու մասնագիտական վարկանիշի ցածր մակարդակի և սոցիալական թույլ պաշտպանության պատճառով տեղի է ունենում որակյալ կադրերի արտահոսք: Հարկ է նշել, որ համակարգից հեռացան նաև մեծ թվով տղամարդ մանկավարժներ: Իսկ մասնագիտական կրթության ոլորտում ընդգրկված դասախոսական համակազմում պահպանվում է որոշակի հավասարակշռություն: Այս խնդրի լուծման և մանկա-

վարժների սոցիալական պաշտպանության ապահովման նպատակով 2005թ. ՀՀ պետական բյուջեով բարձրացվել է մանկավարժական կադրերի աշխատավարձը, որով այն 20 տոկոսով գերազանցում է հանրապետության միջին աշխատավարձը:

2001թ. օրենքի ուժ է ստացել «Կրթության զարգացման 2001-2005թթ. պետական ծրագիրը», որի հիմնական նպատակն է ապահովել կրթության համակարգի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման և հասարակության սոցիալ-տնտեսական առաջընթացի գործոն:

2003թ. ՀՀ կառավարության կողմից հաստատված «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» առաջնային ուղղություններ են համարվում կրթության որակի և կրթության բոլոր մակարդակներում հավասար մատչելիության ապահովումը:

2004թ. ընդունվել է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվում և կարգավորվում են տվյալ ոլորտում ՀՀ պետական քաղաքականության սկզբունքները, իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները: Կրթության այս բնագավառում հիշյալ օրենքով ամրագրվել են հետևյալ սկզբունքները. կրթության մատչելիությունն՝ ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների, մրցութայնությունը, թափանցիկությունը, հրապարակայնությունը և այլն: Մույն օրենքով սահմանվում են նաև բարձրագույն ուսումնական հաստատությունում պրոֆեսորադասախոսական ու գիտական աշխատողների և ուսանողների ակադեմիական ազատությունները:

Հայաստանի Հանրապետության կրթության համակարգի զարգացման քաղաքականությունն այսօր սերտորեն կապված է միջազգային կրթական հանրությունում ընթացող գործընթացների հետ: Հայաստանը որդեգրել է միջազգային կրթական համակարգին ինտեգրվելու քաղաքականություն, որը ենթադրում է կրթության կառուցվածքի և բովանդակության համապատասխանեցում ժողովրդավարական հասարակության և շուկայական հարաբերությունների պահանջներին: Այս նպատակով կարևորվում է միջազգային համագործակցությունը կրթական բոլոր մակարդակներում:

Նախադպրոցական կրթության համակարգի բարեփոխման նպատակով և միջազգային մի շարք կազմակերպությունների աջակցությամբ իրականացվում են «Նախադպրոցական կրթություն, խնամք և զարգացում», «Ծնողների կրթություն», «Քայլ առ քայլ» և «Երեխաների ներառական կրթության զարգացում» ծրագրերը: ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի, World Vision international կազմակերպության հայաստանյան գրասենյակների և «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ իրականացվող այս ծրագրերի շրջանակներում վերապատրաստվել են նախադպրոցական համակարգի աշխատողներ, ծնողներ ու համայնքի անդամներ, մշակվել են մեթոդական ձեռնարկներ:

«Ծնողների կրթություն» ծրագրի նպատակն է ծնողներին և խնամողներին գիտելիքներ հաղորդել վաղ մանկության զարգացման վերաբերյալ, այլընտրանքային ծառայությունների միջոցով ընդլայնել նախադպրոցական կրթության մեջ ծնողների

և երեխաների ընդգրկվածության շրջանակները: Ծրագիրը մեթոդական աջակցություն է ցույց տալիս հատկապես մանկապարտեզ չհաճախող երեխաների ծնողներին՝ ընտանիքներում դաստիարակության գործընթացը ճիշտ կազմակերպելու նպատակով:

«Գենդերային իրազեկություն և գենդերային զգայնություն. զուգակշռված ժողովրդավարության նախադրյալներ» ծրագրի շրջանակներում հանրապետությունում մեծածավալ աշխատանք է իրականացնում «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը: Առաջին քայլերն են արվել բարձրագույն կրթության համակարգում գենդերային միջառարկայական և հատուկ դասընթացների դասավանդման ուղղությամբ: Հանրապետության հինգ համալսարաններում և երեք ինստիտուտներում այս կազմակերպության աջակցությամբ շուրջ չորս տարի է՝ կազմակերպվում են հատուկ դասընթացներ գենդերային քաղաքականության, կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ: Ստեղծվել է նաև «Գենդերը և տնտեսագիտությունը» դասագիրքը: Կազմակերպությունը ներկայումս նախաձեռնել է բարձրագույն կրթության հաստատությունների համար գենդերային կրթության չափորոշիչների մշակման ու ներդրման աշխատանքները: Նախատեսվում է մշակել գենդերային կրթության ստանդարտացման քաղաքականությունը և նոր հայեցակարգը: Գենդերային գիտելիքներ են հաղորդվում նաև 36 հանրակրթական դպրոցների 8-րդ և 9-րդ դասարաններում: Դասավանդման արդյունքները ցույց են տալիս, որ տարեցտարի գենդերային առարկաներ անցած սովորողների մեջ որոշակիանում է գենդերային հավասարության դրական ընկալումը, ձևավորվում են այնպիսի ժողովրդավարական արժեքներ, ինչպիսիք են կանանց քաղաքացիական դիրքորոշման և հասարակական-քաղաքական կյանքին մասնակցելու իրավունքի ճանաչումը: Ամեն տարի գենդերային դասընթացներ են անցնում բուհերի շուրջ 400 ուսանողներ և հանրակրթական դպրոցների 700-ից ավելի աշակերտներ: Ծրագրի շրջանակներում երեք բուհերում ստեղծվել են ռեսուրսային կենտրոններ, կազմակերպվում են կոնֆերանսներ, կլոր սեղաններ ու վերապատրաստման դասընթացներ: Այս ծրագիրը մեկ անգամ ևս փաստում է, որ գենդերային կրթությունն անընդհատ կրթության համակարգում քաղաքացիական դաստիարակության, քաղաքացիական ակտիվության ու պատասխանատվության բարձրացման, հասարակությունում գենդերային հավասարության հասնելու կարևոր գործոն է:

ՀՀ կառավարության կողմից հաստատված «ՀՀ-ում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010թթ. ազգային ծրագրով» նախատեսվում է ընդլայնել կյանքի հմտությունների ձևավորման ու զարգացման, սեփական իրավունքների ու գենդերային հիմնահարցերի ուսուցման տարրերը: Նախատեսվում է ազգային ծրագրի շրջանակներում գենդերային հիմնահարցերի վերաբերյալ հատուկ դասընթացներ կազմակերպել հասարակական, քաղաքական գործիչների ու քաղաքացիական ծառայողների համար:

VII. Կանանց առողջության պաշտպանությունը

Համաձայն 1996 թվականի մարտին ընդունված «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի՝ կանանց համար երաշխավորված է տղամարդկանց հավասար բուժօգնությունից օգտվելու իրավունքը: Ավելին, մոր և մանկան առողջության պահպանումը ընդունվել է որպես հիմնական գերակայություն և գտնվում է պետության հովանավորության ներքո: Ինչպես և նախորդ տասնամյակում, ներկայումս ևս, համաձայն պետության կողմից երաշխավորված նպատակային ամենամյա ծրագրերի, հղիության և ծննդաբերության ընթացքում սոցիալապես անապահով կանանց համար, ինչպես նաև անհետաձգելի բուժում պահանջող հիվանդությունների դեպքում իրականացվում է անվճար բուժօգնություն և սպասարկում, որի շրջանակները և ֆինանսավորումը տարեցտարի ընդլայնվում են:

Վերջին տարիներին Հայաստանում ժողովրդագրական-առողջապահական բնագավառում նկատելի են դրական միտումներ, որոնք բնութագրվում են մահացության համեմատաբար կայուն ֆոնի վրա (6,3-6,6/1000 մարդ), պտղաբերության, ծնելիության և բնական աճի նվազման դադարեցմամբ: Այսպես, եթե ծնունդների թիվը, պտղաբերությունը և բնական աճը 2001թ. կազմել են համապատասխանաբար 33009, 1,01 և 2,1, 2002թ.՝ 33423, 1,2 և 2,1, ապա 2003թ.՝ 36909; 1,2 և 2,4: Այսպիսով, սկսած 2001թ.-ից, արձանագրվում է նախորդ տարիների համեմատությամբ ծննդաբերությունների թվի որոշ ավելացում, համապատասխանաբար 1,9, 9,9 և 2%-ով: Ի տարբերություն ԱՊՀ մյուս երկրների, բնական աճը, չնայած որոշակի կրճատմանը վերջին տասնամյակում, շարունակում է մնալ դրական՝ տատանվելով 2,1-2,4 սահմաններում:

Ինչպես ցույց է տալիս վիճակագրական տվյալների վերլուծությունը, կանանց մոտ՝ բոլոր տարիքային խմբերում, նկատվում է հիմնական հիվանդությունների, մասնավորապես ակտիվ տուբերկուլյոզով, չարորակ նորագոյացություններով, սեռավարակներով ընդհանուր հիվանդացության և մահացության մակարդակի էական իջեցում՝ տղամարդկանց համեմատությամբ:

Համաձայն վերարտադրողական առողջության հիմնահարցերի վերաբերյալ վերջին տարիների միջազգային փաստաթղթերի ու գիտաժողովների որոշումների՝ իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- մշակվել են վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքներին առնչվող բժշկական գործելակերպը և իրավական դաշտը կանոնակարգող օրենքներ, կառավարության որոշումներ, մի շարք նորմատիվ - մեթոդական փաստաթղթեր,
- 1996թ հաստատվել է «Վերարտադրողական առողջության բարելավման ազգային ծրագիրը», որի առանձին բաղադրիչներին իրականացումն սկսվել է 1997թ.,
- 1999թ ընդունվել է «Մարդու իմունային անբավարարության վարակից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքը,

- 2002թ. ընդունվել է «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքը,
- 2003թ. ընդունվել է «Մոր և մանկան առողջության պահպանման 2003-2015թթ ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը,
- 2003թ. ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Վերարտադրողականության դոնորների, ինչպես նաև վերարտադրողականության դոնոր չհանդիսացող քաղաքացիների կողմից սեռաբջիջների տրամադրման, տրամադրած սեռաբջիջների և սաղմի պահպանման կարգն ու պայմանները հաստատելու մասին» որոշումը,
- 2004թ. ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Հղիության արհեստական ընդհատման կարգը և պայմանները հաստատելու մասին» որոշումը:

Վերջին տարիներին ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատվել են նաև վերարտադրողական առողջության բարելավմանն ուղղված մի շարք կանոնակարգեր, ռազմավարություններ, ծրագրեր ու որոշումներ:

Հանրապետությունում կանանց վերարտադրողական առողջության պահպանումն իրականացվում է մանկաբարձագինեկոլոգիական բուժհաստատությունների լայն ցանցի միջոցով, որն ընդգրկում է 2 բարձր մասնագիտացված հանրապետական կենտրոն, ինքնուրույն գործող 10 ծննդատուն, շրջանային և քաղաքային բուրգերի կազմում գտնվող 44 մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնար և ամբուլատոր բաժանմունք, 125 կանանց կոնսուլտացիա և կաբինետ, գյուղական 608 բուժական-մանկաբարձական կետ: Բուժսպասարկման մատչելիությունը ապահովելու համար այն կազմակերպված է տարածքային սկզբունքով՝ ըստ բնակչության վայրի:

Ներկայումս առողջապահական համակարգում աշխատում է 11432 բժիշկ, որից 851 մանկաբարձ-գինեկոլոգ, 188 նեոնատոլոգ: Չնայած գերակշռող մասը կանայք են (7994 հոգի), առողջապահության համակարգում ղեկավար պաշտոններ զբաղեցնող 810 բժիշկներից միայն 363-ն են կանայք:

Ծննդօգնությունը հիմնականում ֆինանսավորվում է պետական բյուջեից, սակայն այն շարունակում է մնալ անբավարար դեղորայքի, սարքավորումների, բուժ-պարագաներ ձեռք բերելու և աշխատողներին բավարար աշխատավարձ վճարելու առումով: Բժշկական անձնակազմի աշխատավարձը չի գերազանցում 40-50 դոլարը:

Հայաստանում ծննդաբերությունները հիմնականում (98-99%) տեղի են ունենում հիվանդանոցային պայմաններում, որը հնարավորություն է տալիս պահպանելու կանանց վերարտադրողական առողջությունը, իջեցնելու մայրական ու պերինատալ հիվանդացությունն ու մահացությունը, հետծննդյան թարախասեպտիկ բարդությունները: Կեսարյան հատումները վերջին տարիներին աճի միտում են դրսևորում: Այսպես, եթե այս ցուցանիշը 1996թ. եղել է 45,6, ապա 2003թ. այն կազմել է 88,5 (յուրաքանչյուր 1000 ծննդաբերությունից):

Կանանց առողջության և նրանց բժշկական օգնության որակի գնահատման կարևոր ցուցանիշներից է մայրական մահացությունը, որի իջեցումը Հազարամյակի նպատակներից մեկն է: Մայրական մահացության ցուցանիշը Հայաստանում վերջին տասնամյակում գերազանցում է ԱՀԿ-ի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկր-

ների համար նպատակային համարվող 15/100000 միջին մակարդակը և զգալիորեն բարձր է Արևմտյան Եվրոպայի ցուցանիշներից (8.8/100000), սակայն ցածր է տարածաշրջանի երկրների համեմատությամբ (40/100000 կենդանաձմնության հաշվով):

Թեև վերջին 13 տարիների ընթացքում Հայաստանում նկատվում է մայրական մահացության թվի որոշ նվազում, այն տեղի է ունենում մեծ տատանումներով, և ցուցանիշը շարունակում է գերազանցել ԱՀԿ-ի նպատակային մակարդակը (Արևելյան Եվրոպայի համար՝ 15/100000 կենդանաձիմների նկատմամբ): Յուրաքանչյուր տարվա կտրվածքով մայրական մահացության ցուցանիշի տատանումները զգալիորեն մեծ են, հետևաբար համեմատությունը օբյեկտիվ չէ, որը պայմանավորված է երկրի փոքր բնակչությամբ: Այդ իսկ պատճառով ցուցանիշները վերլուծվում են եռամյա կտրվածքով: Այսպես, մայրական մահացության ցուցանիշը 1996-1998թթ. եռամյա կտրվածքով եղել է 30,5/100000 կենդանաձմնության հաշվով, 1999-2001թթ.՝ 43,3/100000, իսկ 2002-2004թթ.՝ 25/100000:

Ինչպես և բոլոր զարգացող երկրներում, Հայաստանում ևս մայրական մահացության հիմնական պատճառներից են մանկաբարձական արյունահոսությունները, հիպերտենզիվ խանգարումները, էքստրագենիտալ հիվանդությունները:

Վերջին երեք տարիներին մանկական մահացության զգալի նվազման միտում է նկատվում՝ շուրջ 30%, և տատանվում է 11-12%-ի սահմաններում, այն դեպքում, երբ 1998-2000թթ. այդ ցուցանիշն ունեցել է աճման դինամիկա (1998թ.՝ 14,7‰, 1999թ.՝ 15,4‰, 2000թ.՝ 15,6‰):

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ մինչև 1997թ. արհեստական վիժումները Հայաստանում հանդիսանում էին պտղաբերության վերահսկման հիմնական միջոցը և մայրական մահացության հիմնական պատճառներից մեկը:

1997թ.-ից սկսած՝ Հայաստանում իրականացվում է «Վերարտադրողական առողջության բարելավման ազգային ծրագրի» ընտանիքի պլանավորման բաղադրիչը, որի շնորհիվ էապես փոխվել են կանանց վերաբերմունքը պտղաբերության վերահսկման նկատմամբ և այդ նպատակով կիրառվող մեթոդները: Ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների՝ 1996թ. արհեստական վիժումների ցուցանիշը կազմել է 669՝ 1000 կենդանաձմնության նկատմամբ կամ 30,5 1000 պտղաբեր տարիքի կանանց հաշվարկով:

1997թ.-ից սկսած՝ աբորտների թիվը 2 անգամ կրճատվել է, 2000թ արհեստական վիժումների ցուցանիշը կազմել է 335՝ 1000 կենդանաձմնության նկատմամբ կամ 10,9՝ 1000 պտղաբեր տարիքի կանանց հաշվարկով, 2003թ.՝ համապատասխանաբար 297 և 11,8:

Աբորտների կրճատման մասին է վկայում նաև վերջին տասնամյակում ծննդաբերություն /աբորտ գործակցի փոփոխությունը: Եթե 1993թ. մեկ աբորտին ընկնում էր 2.4 ծնունդ, ապա ընտանիքի պլանավորման ծրագրի իրականացման արդյունքում, սկսած 1998թ.-ից, ծնունդ/աբորտ հարաբերակցությունն էապես փոխվեց՝ մեկ աբորտի դիմաց դառնալով 3- 5 ծնունդ:

Մինչև 1997թ. «Վերարտադրողական առողջության բարելավման ազգային

ծրագրի» ընտանիքի պլանավորման ենթածրագրի իրականացումը Հայաստանում ընտանիքի պլանավորման ծառայությունների ցանցի մակարդակն անբավարար էր:

Ըստ ԱՀԿ-ի ամփոփումների (1995թ.)՝ եվրոպական և ասիական երկրների շարքում հակաբեղմնավորիչների օգտագործման ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում էր նախավերջին տեղը (հակաբեղմնավորիչ օգտագործողների 9% ցուցանիշով):

1997թ. առողջապահության նախարարության, ԱՀԿ-ի և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի համագործակցությամբ մշակվել և իրականացվում է «Վերարտադրողական առողջության բարելավման ազգային ծրագիրը», որի շրջանակներում ստեղծվել են ընտանիքի պլանավորման ծառայություններ, հանրապետության ամբողջ տարածքում բացվել են ընտանիքի պլանավորման 77 կաբինետներ, ուսանել են 195 բուժաշխատողներ, որոնք իրենց հերթին ուսուցանել են իրենց գործընկերներին և բնակչությանը: Տպագրվել են ընտանիքի պլանավորման վերաբերյալ մոդուլներ, գրքույկներ, ձեռնարկներ: Ընտանիքի պլանավորման բոլոր կաբինետները հագեցվել են ժամանակակից բուժապարագաներով, տրամադրվել են անհրաժեշտ հակաբեղմնավորիչ միջոցներ: Իրականացված աշխատանքների շնորհիվ ժամանակակից հակաբեղմնավորիչ օգտագործող կանանց թիվը 1997թ. համեմատությամբ մեծացել է. ներարգանդային պարույրներ օգտագործողների թիվը՝ 3,5-4 անգամ, հորմոնալ միջոցներ օգտագործողներինը՝ 8-10 անգամ՝ կազմելով համապատասխանաբար 1997թ 3,1% և 1,9%, 2001թ.՝ 11,3% և 22,3%, իսկ 2003թ.՝ 11,8% և 13,2%:

1. Կանանց վերարտադրողական օրգանների չարորակ նորագոյացություններ

Կանանց մահացության պատճառների շարքում առաջին տեղերից մեկը զբաղեցնում են չարորակ նորագոյացությունները, հատկապես կրծքագեղձի և արգանդի վզիկի քաղցկեղը:

Հաստատված է, որ կանանց չարորակ նորագոյացությունների շարքում կրծքագեղձի քաղցկեղը գրավում է առաջին տեղը (23,8%, որից 50%-ը 40-44 տարիքում), արգանդի վզիկի քաղցկեղը՝ իր տարածվածությամբ, երկրորդ տեղում է (12,8%):

Թեև վերջին տարիների ընթացքում արգանդի վզիկի քաղցկեղի հաճախականության առանձին բարձրացում չի արձանագրվել (1990թ.՝ 14,3/100000 բնակչի հաշվով, 1998թ.՝ 11,2, 2003թ.՝ 13,9), սակայն նկատվում է կանանց չարորակ նորագոյացությունների, այդ թվում արգանդի վզիկի քաղցկեղի, հատկապես բարձիթողի դեպքերի ավելացում:

Հանրապետությունում նկատվում է չարորակ նորագոյացությունների, մասնավորապես արգանդի վզիկի քաղցկեղի երիտասարդացման միտում: Այս երևույթը պայմանավորող գործոններից է կանխարգելիչ համակարգի բացակայությունը, ինչպես նաև սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, մասնավորապես պապիլոմավիրուսի, գենիտալ հերպեսի և խլամիդիոզի հաճախացումը: Ուստի սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները կանխելու դեպքում

կկանխվի մասնաճյուղի վզիկի քաղցկեղի աճը:

Վերջին տասնամյակում բուժօգնության մատչելիության նվազման հետ մեկտեղ անկում է ապրել կանանց սեռական օրգանների օնկոլոգիական հիվանդացության կանխարգելիչ աշխատանքը, ներառյալ կաթնագեղձի նախաքաղցկեղային վիճակների հայտնաբերման և բուժման ուղղությամբ: Այդ իսկ պատճառով 1990-2003թթ. ընթացքում նկատվում է կաթնագեղձի քաղցկեղի հաճախականության աճի միտում: Այսպես, 1990թ. կաթնագեղձի քաղցկեղով հիվանդացությունը կազմել է 36,3/100000 բնակչի հաշվով, 1998թ.՝ 33,1, 2003թ.՝ 42,1:

Կանանց վերարտադրողական համակարգի չարորակ ուռուցքների հիվանդացության և մահացության իջեցման նպատակով 2004թ. ընթացքում հանրապետությունում ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի աջակցությամբ իրականացվել է վերարտադրողական տարիքի 2600 կանանց հետազոտում (սեռավարակների և արգանդի նախաքաղցկեղ/քաղցկեղային հիվանդությունների տարածվածության ուսումնասիրություն): Ստացված տվյալների վերլուծությունը հնարավորություն կտա մշակելու կանանց սեռական օրգանների օնկոլոգիական հիվանդացության և մահացության կանխարգելման ազգային ծրագիր:

2. Սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ (ՍՃՓՎ)

«Վերարտադրողական առողջության բարելավման ազգային ծրագրի» ընտանիքի պլանավորման ենթաժողովի իրականացումը Հայաստանում նպաստեց սիֆիլիսով և գոնորեայով հիվանդացության հաճախականության իջեցմանը: Այսպես, եթե 1996թ. սիֆիլիսով և գոնորեայով հիվանդացությունը 100 000 բնակչի հաշվով կազմում էր համապատասխանաբար 17,7 և 45,9, իսկ 1999թ.՝ 12,5 և 26,3, ապա 2003թ.՝ 6,8 և 17,7: Սակայն վերջին տարիներին անհանգստացնող է սեռավարակներով կանանց հիվանդացության բարձրացման և երիտասարդացման միտումը: Սիֆիլիսի դեպքում նկատվում է կանանց թվի գերազանցում տղամարդկանց համեմատ,, իսկ գոնորեայի դեպքում՝ հակառակը:

3. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիվանդացությունը կանանց շրջանում

1988թ-ից մինչև 2004թ. սեպտեմբերի 1-ը Հայաստանում գրանցվել է 287 վարակակիր, որոնցից 272-ը՝ ՀՀ քաղաքացի: ՄԻԱՎ վարակակիրներից 210-ը տղամարդիկ են (77,2%), 62-ը՝ կին (22,8, %): Նրանցից 4-ի մոտ ախտորոշվել է ՁԻԱՀ: ՄԻԱՎ վարակակիրներից 4-ի մոտ հիվանդությունն ախտորոշվել է հղիության ժամանակ, 1998-1999թթ.՝ մեկական դեպք, 2002թ.՝ 2 դեպք, 2002թ. ընթացքում արձանագրվել է ՄԻԱՎ վարակակրության 41 դեպք, որն ամենաբարձրն է բոլոր տարիների մեջ: ՄԻԱՎ վարակակիր կանանցից 4-ը մահացել են: 4 դեպք արձանագրվել է երեխաների մոտ (1,5%): ՄԻԱՎ վարակակիրների ճնշող մեծամասնությունը (78,7%) 20-29 տարիքային խմբում է:

Աղյուսակ 1

ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի վարակակրությունը կանանց շրջանում

| Տարիներ | ՄԻԱՎ վարակակիրների բացարձակ թիվը |
|----------|----------------------------------|
| 1990 | 0 |
| 1991 | 0 |
| 1992 | 0 |
| 1993 | 0 |
| 1994 | 0 |
| 1995 | 0 |
| 1996 | 8 |
| 1997 | 7 |
| 1998 | 4 |
| 1999 | 9 |
| 2000 | 6 |
| 2001 | 3 |
| 2002 | 8 |
| 2003 | 17 |
| ընդամենը | 62 |

Աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն

Աղյուսակ 2

ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի վարակակրությունը կանանց շրջանում՝ ըստ տարիքային խմբերի 1996-2003թթ.

| Տարիքային խմբերը | | | | | | |
|------------------|---------|---------|---------|---------|---------|---------|
| 0-4տ. | 15-19տ. | 20-24տ. | 25-29տ. | 30-34տ. | 35-39տ. | 40-44տ. |
| 1 | 2 | 12 | 16 | 16 | 9 | 6 |

Աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն

Կանանցից 60-ը վարակվել են հետերոսեքսուալ, մեկը՝ արյան ճանապարհով, մեկը՝ պերինատալ: Ինչ վերաբերում է 4 վարակակիր երեխաներին, բոլորը վարակվել են պերինատալ ճանապարհով, որոնցից երկուսը մահացել են:

ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի վարակակրությունը կանանց շրջանում՝ ըստ բնակության վայրի 1996-2003թթ.

| բնակության վայրը | բացարձակ թիվը |
|------------------|---------------|
| Երևան | 32 |
| Լոռի | 9 |
| Գեղարքունիք | 5 |
| Շիրակ | 6 |
| Արարատ | 5 |
| Սյունիք | 2 |
| Արագածոտն | 1 |
| Արմավիր | 1 |
| Կոտայք | 1 |
| ընդամենը | 62 |

Աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն

Սակայն ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի տվյալ վիճակագրությունը չի արտացոլում համաճարակի տարածվածության իրական չափերը, այն ավելի քան 10 անգամ գերազանցում է գրանցված տվյալները : Այսինքն՝ հաշվարկային տվյալներով ՀՀ-ում կա մոտ 2800-3000 ՄԻԱՎ վարակակիր:

Հանրապետությունում կանանց վերարտադրողական առողջության պաշտպանությանն են ուղղված հետևյալ միջոցառումները.

- վերարտադրողական առողջության, ներառյալ անվտանգ մայրության հիմնախնդիրների գերակայության վերահաստատում և ազգային նպատակային ծրագրերի մշակում,
- մայրության, վերարտադրողական առողջության պահպանման խրախուսման պետական հովանավորության, լրացուցիչ միջոցառումների մշակում, պետության կողմից իրականացվող անվճար բուժօգնության ծավալների մեծացում, բուժօգնության մատչելիության բարձրացում, պետական օժանդակության, նպաստների համակարգում գոյություն ունեցող օրենսդրական դաշտի կատարելագործում, որը կխթանի ծնելիության բարձրացումը, բնական աճի ավելացումը, անցանկալի հղիությունների թվի նվազեցումը, հղիների և նրանց երեխաների առողջության պահպանումը,
- բժշկական կադրերի և ծրագրերի վերանայում, նրանց որակավորման բարձրացման, գիտելիքների գնահատման համակարգի կատարելագործում,
- կանանց մանկաբարձագինեկոլոգիական օգնության որակի կատարելագործում, պերինատալ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում, ծննդօգնության հիմնարկների նյութա-տեխնիկական բազայի ամրապնդում,

- մանկաբարձության, պերինատոլոգիայի և ռեպրոդուկտոլոգիայի ասպարեզում գիտական նպատակային հետազոտությունների իրականացում,
- անվտանգ մայրության, սեռավարակների, սեռական օրգանների նախաքաղցկեղային հիվանդությունների, առողջ կենսակերպի և անվտանգ սեռական վարքագծի վերաբերյալ բնակչության շարունակական իրազեկման համակարգի մշակում և ներդրում,
- վերարտադրողական առողջության իրավիճակի պարբերական վերահսկման և կարիքների գնահատման տեղեկատվական-վերլուծական (մոնիտորինգի) համակարգերի կատարելագործում,
- ծնունդների, պերինատալ մահացության գրանցման գործընթացի բարելավում օրենսդրության կատարելագործման ճանապարհով, կենդանածնության մեռելածնության և ԱՀԿ-ի այլ նոր բնորոշումների ներդրում,
- հղիների սոցիալ-հոգեբանական և ֆիզիկական պատրաստման համակարգի ներդրում,
- առողջության առաջնային պահպանման համակարգի՝ որպես բնակչության համար առավել մատչելի բուժօգնության տեսակի, և նրա դերի էլ ավելի կարևորում, կանանց առողջության բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի շարունակական իրագործում ու զարգացում,
- բուժօգնության որակի վերահսկման և բարելավման շարունակական միջոցառումների իրականացում, ընտանիքներին ցույց տվող որակյալ բուժօգնության ապահովում,
- մայրերի և երեխաների անվճար բժշկական օգնության անհրաժեշտ ծավալների ապահովում պետության կողմից երաշխավորված նպատակային ծրագրերի շրջանակներում,
- նորածինների խնամքի և անհետաձգելի բուժօգնության որակյալ ծառայությունների զարգացում,
- մորից երեխային ՄԻԱՎ վարակի անցման կանխարգելում, վարակակիր հղիների և երեխաների բուժօգնության բարելավմանն ուղղված միջոցառումների ապահովում,
- անվտանգ մայրության ապահովում, հղիների նախածննդյան խնամքի, պտղի ներարգանդային ախտորոշման բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացում, շուրջծննդյան որակյալ բուժօգնության ապահովում,
- հղիների, կերակրող մայրերի և երեխաների սնուցման իրավիճակի շարունակական հսկողություն և սննդապահովման ծրագրերի իրականացում,
- անպտուղ ամուսնության էպիդեմիոլոգիական հետազոտության անցկացում, հայտնաբերված պատճառների նպատակային կանխարգելման միջոցառումների իրականացում,
- կանանց նկատմամբ խտրականության, բռնությունների, այդ թվում թրաֆիկինգի նվազեցմանը և կանխարգելմանն ուղղված ծրագրերի իրականացում:

Վերարտադրողական առողջության բարելավման նպատակները մինչև 2015թ.

- Մայրական մահացության մակարդակի իջեցում 50%-ով (միջին եռամյա ցուցանիշը 2015թ. չպետք է գերազանցի 20/100000-ը) :
- Մանկական մահացության իջեցում առնվազն 30%-ով պերինատալ կոմպոնենտի կրճատման միջոցով. 2015թ. այն պետք է կազմի ոչ ավելի, քան 10% :
- Ցածր քաշով ու անհաս նորածինների թվի կրճատում առնվազն 20%-ով, այն 2015թ. չպետք է գերազանցի 6%-ը :
- Պտղի զարգացման արատների հաճախականության նվազեցում առնվազն 5-7%-ով մինչև 2015թ.:
- Վերարտադրողական օրգանների (կրծքագեղձ, արգանդի վզիկ) քաղցկեղային հիվանդությունների կրճատում առնվազն 30%-ով :
- Հղիության արհեստական վիժումների կրճատում առնվազն 30%-ով:
- 2015 թվականի դրությամբ հղիների առնվազն 90%-ի մոտ ՄԻԱՎ-ի նկատմամբ սկրինինգի իրականացում:
- Սակավարյունության կրճատում 50% -ով 2015թ.:
- Անպտղության կրճատում առնվազն 30%-ով:

VIII. Կինը և բռնությունը

1. Կանանց նկատմամբ բռնության կանխարգելումը

Այսօր հանրապետությունում ուշադրություն պահանջող խնդիրներից են կանանց և աղջիկների նկատմամբ սեռական և ֆիզիկական բնույթի բռնությունների դեպքերը, ինչպես նաև հարկադրանքի միջոցով վերջիններիս մի շարք իրավունքների և ազատությունների սահմանափակման հարցերը:

2001-2003թթ. ՀՀ ոստիկանության կողմից կատարված ուսումնասիրություններն ու վերլուծությունները ցույց են տվել, որ այդ տարիներին հանրապետությունում բռնությունների զոհ է դարձել համապատասխանաբար 52, 51 և 55 կին:

Ուշադրության են արժանի նաև հետևյալ վիճակագրական տվյալները:

1998-2002թթ. ընթացքում հանրապետության տարածքում արձանագրվել են անչափահաս աղջիկների նկատմամբ կատարված մի շարք հանցագործություններ.

- սեռական բնույթի բռնություն 16 տարեկանը չլրացած կամ արբունքի չհասած անձանց նկատմամբ. 1998թ.՝ 11 դեպք, 1999 և 2000թթ.՝ 16ական, 2001-ին՝ 22 դեպք, 2002-ին՝ 8 դեպք,
- ամուսնական տարիքի կամ արբունքի չհասած անձի հետ փաստական ամուսնական հարաբերությունների հաստատում. 1998թ.՝ 2 դեպք, 1999թ. –ին՝ 6 դեպք,

2000թ.՝ 3 դեպք, 2001թ.՝ 5 դեպք, 2002թ.՝ 8 դեպք:

Բռնության դեպքեր հաճախ են հանդիպում մարմնավաճառությամբ զբաղվողների շրջանում, մի երևույթ, որը վերջին տարիներին տարածում է գտել հանրապետությունում սոցիալտնտեսական վիճակի վատթարացման, ինչպես նաև մարմնավաճառներին շահագործողների և կազմակերպիչների նկատմամբ գործող օրենքների բավական ազատական լինելու պատճառով: Կարևոր պատճառներից է նաև դեռահասների ու երիտասարդության բարոյաստեղծական դաստիարակության արդյունավետ համակարգի բացակայությունը:

ՀՀ ոստիկանությունը կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և բացահայտման ամենօրյա ջանքեր է գործադրում: Այս աշխատանքների կատարման գործընթացում իր ուրույն տեղն ունի ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության վարչության կազմում գործող անչափահասների գործերով բաժինը: Վերջինիս գործունեությունը հատկապես ուղղված է անչափահաս աղջիկների խնդիրներին՝ մեծ ուշադրություն դարձնելով նրանց իրավունքների պաշտպանությանը:

Հաշվի առնելով խնդրի կարևորությունը՝ «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010թթ. ազգային ծրագրով» նախատեսված են կանանց նկատմամբ բռնության երևույթի կանխարգելմանն ուղղված հետևյալ միջոցառումները.

- իրականացնել հասարակական կյանքի տարբեր ոլորտներում բռնության դեպքերի բացահայտմանն ու դրանց պատճառների պարզաբանմանն ուղղված հետազոտություններ,
- մշակել բռնությունը բնութագրող ցուցանիշների համակարգ՝ ներդնելով այդ ցուցանիշները վիճակագրական հաշվետվություններում,
- համապատասխանեցնել ազգային օրենսդրության դրույթները ՀՀ միջազգային պայմանագրերի պահանջներին,
- կազմակերպել բռնության ենթարկված կանանց հետ աշխատող սոցիալական աշխատողների, առողջապահական, կրթական համակարգի մասնագետների և իրավապահ մարմինների վերապատրաստման և ուսուցման համալիր դասընթացներ,
- հանրապետության քաղաքների և մարզերի համապատասխան հաստատություններում ստեղծել բռնությունների հետևանքների վերացման մասնագիտական ծառայություններ:

2. Կանանց առևտուրը (թրաֆիկինգ)

Անցումային շրջանում երկրում տիրող սոցիալ-տնտեսական վիճակը նպաստավոր պայմաններ ստեղծեց անկանոն միգրացիայի և մարդկանց շահագործման համար: Այս համատեքստում հատկապես անպաշտպան դարձան երիտասարդ կանայք և աղջիկները: Մարդկանց առևտրի զոհ են դառնում մեծ մասամբ ամուսնալուծված կամ սոցալապես անապահով կանայք, որոնք զբաղվում են մարմնավաճառությամբ:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար նպատակակետ

հանդիսացող հիմնական երկրներն են Արաբական Միացյալ Էմիրությունները և Թուրքիան: Գոյություն ունի նաև չնչին արտահոսք դեպի Եվրոպական որոշ երկրներ: Թուրքիայի հետ Հայաստանը չունի համապատասխան դիվանագիտական հարաբերություններ: ԱՄԷ-ի և Հայաստանի միջև 2002թ. կնքվել է իրավական փոխօգնության պայմանագիր:

Մարդկանց առևտուրը՝ որպես առանձին հանցատեսակ, ընդգրկվել է ՀՀ քրեական օրենսգրքում (ուժի մեջ է մտել 2003թ. օգոստոսի 1-ից): Օրենքը տարածվում է միայն նշված ժամանակից հետո կատարված հանցարարքների վրա: Մինչ այդ կատարված հանցագործությունները, որոնք փաստացի պարունակել են թրաֆիկինգի հատկանիշներ, որակվել են կավատություն, սակայն վիճակագրական աղբյուրներում կավատության ավանդական ձևերից տարբերակելու նպատակով պայմանակա՛նորեն կոչվել են «արտագնա կավատություն»:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին առնչվող, սեռական շահագործման նպատակով մարդկանց առևտրի հատկանիշներով բացահայտված հանցագործության հիմնական դեպքերում Հայաստանը հանդիսացել է ծագման երկիր: Սակայն 2003թ. մի դեպքում ՀՀ տարածքը օգտագործվել է նաև որպես տարանցիկ երկիր Վրաստանի քաղաքացիներից բաղկացած հանցավոր խմբի կողմից, որոնք կեղծ վրացական անձնագրերով ԱՄԷ էին փոխադրում Ուզբեկստանի քաղաքացուհիների, իսկ 2004թ. բացահայտված մի դեպքում՝ որպես նպատակակետ արդեն Ուզբեկստանի քաղաքացիներից բաղկացած հանցավոր խմբի կողմից:

ՀՀ վարչապետի 2002թ. հոկտեմբերի 14-ի թիվ 591-Ա որոշմամբ ԱԳՆ-ում ստեղծվեց միջգերատեսչական հանձնաժողով, որի խնդիրն էր ուսումնասիրել ՀՀ-ից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման և առևտրի (թրաֆիկինգի) հետ կապված հարցերը և համապատասխան առաջարկություններ ներկայացնել ՀՀ կառավարություն: Հանձնաժողովի գործունեության արդյունքում մշակվեց «Հայաստանի Հանրապետությունից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման և առուվաճառքի (թրաֆիկինգ) կանխման հայեցակարգն ու Հայաստանի Հանրապետությունից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման և առուվաճառքի (թրաֆիկինգ) կանխման 2004-2006թթ. միջոցառումների ազգային ծրագիրը»: 2004թ. հունվարի 15-ի թիվ 58-Ն որոշմամբ այդ փաստաթղթերը հաստատվեցին ՀՀ կառավարության կողմից:

Ծրագիրը հիմնված է երեք սկզբունքների վրա՝ կանխարգելում, հետապնդում ու պաշտպանություն և բաղկացած է մի քանի բաժիններից՝ օրենսդրություն և օրենքի կիրառում, ուսումնասիրությունների կատարում, բնակչության իրազեկում, պաշտպանություն և աջակցություն, փորձի փոխանակում:

2004թ. մարտին ՀՀ կառավարության և ՄԱԶԾ-ի միջև ստորագրվել է պայմանագիր «Մարդկանց առուվաճառքի դեմ պայքար. օժանդակություն հզորությունների զարգացմանը և աջակցություն տուժածներին» ծրագիրը իրականացնելու մասին:

Այդ ծրագրի շրջանակներում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նա-

խարարությունը «Միավորված մեթոդիստների օգնության կոմիտե» ԱՄՆ ՀԿ-ի հայաստանյան մասնաճյուղի հետ համատեղ ստորագրել է Փոխըմբռնման հուշագիր:

Նախատեսված աշխատանքներն արդեն սկսվել են: 2004թ. սեպտեմբերին կազմակերպվել է ուսուցողական դասընթաց Երևանի սոցիալական տարածքային կենտրոնների և զբաղվածության ծառայությունների աշխատակիցների համար, իսկ հոկտեմբերին և դեկտեմբերին նման դասընթացներ են կազմակերպվել մարզերի զբաղվածության կենտրոնների և սոցիալական ծառայությունների աշխատողների համար: Ներկայացվել են այս գործընթացների նախապատմությունը, ազգային ծրագիրը, հստակեցվել է ծառայությունների դերը և նշանակությունը երևույթի դեմ պայքարում, քննարկվել են համագործակցության եղանակները:

IX. Կինը և զինված հակամարտությունները

Գևարաբաղյան հակամարտության հետևանքով 1988-1992թթ. Ադրբեջանից Հայաստան են գաղթել 360 հազարից ավել փախստականներ: Փախստականների ներհոսքը ժամանակագրական առումով գրեթե համընկավ 1988 թվականի Սպիտակի երկրաշարժի հետ, որն ընդգրկեց հանրապետության տարածքի ավելի քան 40 տոկոսը: Ամբողջովին ավերվեց 58 գյուղ, լրջորեն վնասվեց 21 քաղաք և գյուղ, օթևանից զրկվեց 530 հազարից ավելի մարդ: Այսպիսով, 3,7 մլն. բնակչություն ունեցող հանրապետության առջև ծառայած շուրջ 1 մլն մարդկանց կարճ ժամանակում բնակարանով ապահովելու խնդիրը:

Ռմբակոծումների հետևանքով Ադրբեջանին սահմանամերձ 170 գյուղերում ավելի քան 13 հազար բնակելի տների զգալի վնաս է հասցվել, վերանորոգման և վերականգման կարիք ունեն 78 ուսումնական հաստատություններ, 62 բուժսպասարկման հիմնարկներ, շարքից դուրս են եկել 515 կմ ջրատարներ և 724 կմ ոռոգման գծեր, 575 կմ. ավտոճանապարհներ, չեն գործարկվում բազմաքանակ գյուղատնտեսական, արդյունաբերական օբյեկտներ, սոցիալ-տնտեսական ոլորտի հիմնարկներ՝ դրանով իսկ ամբողջովին քայքայելով սահմանամերձ տարածաշրջանի ենթակառուցվածքը:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացարաններում, բարեկամների, ծանոթների մոտ ապրում են մոտ 192 հազար ներքին տեղահանված անձինք:

Մարդասիրական և մասնավորապես փախստականների հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների հետ ՀՀ կառավարության համագործակցության նպատակներից է փախստականների խնդիրների լուծումը բնակարանային շինարարության ծավալների ընդլայնման, զբաղվածության ապահովման, սոցիալական և իրավական պաշտպանության հետ առնչվող հարցերի կարգավորման միջոցով: ՀՀ կառավարությունը փորձում է ստեղծել լավագույն պայմաններ փախստականների համար և նպաստել նրանց հպատակագրմանը (նատուրալիզացիային): Սակայն հպատակագրման գործընթացն ինքնանպատակ չէ և պետք է զուգակցվի

փախստականներին բնակարաններով և աշխատատեղերով ապահովելով: Այդ ուղղությամբ տարվող աշխատանքներում մեծ է ՄԱԿ-ի Փախստականների հարցերի գերագույն հանձնակատարի գրասենյակի աջակցությունը:

Ներկայումս ՀՀ քաղաքացիություն է ստացել 62,000 փախստական: Նպատակահարմար է քաղաքացիություն տալուն զուգահեռ փախստականներին բնակարանով և աշխատանքով ապահովումը: Քաղաքացիություն ստանալու գործընթացը հնարավորինս պարզեցված է: Փախստականը կարող է քաղաքացիություն ստանալ այդ մասին համապատասխան դիմում ներկայացնելու միջոցով: Պետք է նշել, որ փախստականների մեջ կանայք 63 տոկոսից մի փոքր ավելի են, որը բարձր է հանրապետության ընդհանուր բնակչության մեջ կանանց 51,4 տոկոս ցուցանիշից:

ՀՀ կառավարությունը, չնայած երկրում առկա ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակին և շարունակվող շրջափակմանը, խնդրի ծագման առաջին իսկ օրերից աշխատանքներ է տանում փախստականների խնդիրների լուծման և նրանց ինտեգրման ուղղությամբ:

Փախստականների կողմից Հայաստանի քաղաքացիության ընդունումը դիտվում է նրանց ինտեգրման գործընթացի կարևորագույն գործոն:

1951 թ. Փախստականների մասին կոնվենցիայի իրագործումը ենթադրում է ազգային օրենսդրության մեջ համապատասխան միջազգային նորմերի ընդգրկում և կիրարկում: 1999թ. մարտին ՀՀ Ազգային ժողովն ընդունել է «Փախստականների մասին» օրենքը, որի մշակման ընթացքում ԱԺ-ի համապատասխան հանձնաժողովները սերտորեն համագործակցել են ՄԱԿ-ի ՓԳՀ-ի հետ: Օրենքի նախագծի վերաբերյալ ՄԱԿ-ի ՓԳՀ-ից ստացված առաջարկությունների մեծ մասը հաշվի է առնվել: Օրենքով կարգավորվում է փախստականների կարգավիճակի վերաբերյալ փաստաթղթերի ձևակերպման կարգը, սահմանվում է փախստական հասկացությունը, որոշվում են նրանց ժամանակավոր կացարաններ տրամադրելու հարցերը: Կանոնակարգվում են նաև հանրապետությունից փախստականների արտահոսքին առնչվող խնդիրներ:

Վերջին տաս տարիներին փախստականների թվաքանակի և նրանց համակցության կառուցվածքի փոփոխությունը, նրանց մի զգալի մասի՝ առնվազն 15-20% -ի մեկնումը երկրից (Փախստականների առյուծի բաժինը՝ շուրջ 11 տոկոսը Հայաստանից մեկնել են դեռևս 1994-1996թթ) նախանշեցին փախստականների համակցությունում ձևավորված ու տեղաբնակների համապատասխան բնութագրիչներից տարբերվող սոցիալ-ժողովրդագրական և գենդերային առանձնահատկությունները: Դրանց հետագոտման նպատակով, հաշվի առնելով փախստականների վերաբերյալ պետական պաշտոնական տեղեկատվության անկատարությունը, 1999թ ՄԱԿ-ի Չարգացման ծրագիրը և ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակը համատեղ իրականացրին ներկայացուցչական ընտրանքային հետազոտություն, որի տվյալները արձանագրում են փախստականների սեռային համամասնության խախտումը, հատկապես՝ չհիմնավորված փախստականների շրջանում (բնակչության բաշխումն ըստ սեռերի. հիմնավորված փախստականներ՝ 44,9% տղամարդ, 55,1% կին, չհիմնավորված փախստականներ՝

39,4% տղամարդ, 60,3% կին): Ուսումնասիրությունները վկայում են, որ անբարենպաստ պայմանների, տղամարդկանց որոշ մասի «դասալքության» պարագայում փախստական կանանց մի զգալի մասը, այլընտրանք չունենալով, իր վրա է վերցնում տնային տնտեսության թե՛ հոգսը, թե՛ պատասխանատվությունը: Այսպիսով, փախստականների սոցիալ-ժողովրդագրական իրավիճակը, դրա գեղերային առանձնահատկությունները զգալիորեն ավելի բարդ են, քան տեղաբնակներինը: Հետևաբար փախստականների ինտեգրացիայի պետական արդյունավետ քաղաքականությունը պահանջում է այս հանգամանքից բխող համարժեք լուծումներ:

X. Կինը և շրջակա միջավայրը

Վերջին տասնամյակների ընթացքում առաջացած խնդիրները՝ ինչպիսիք են ռեսուրսների նվազումը, բնական համակարգերի աստիճանական անկումը, արտանետումների, արտահոսքերի և աղտոտման հետ կապված վտանգները, հանգեցնում են փխրուն էկոհամակարգերի քայքայմանը:

Հայաստանի Հանրապետությունը կարճ ժամանակահատվածում, եվրոպական ընտանիքին ինտեգրման նպատակով, արդեն հասցրել է միանալ բնապահպանական ոլորտի բազմաթիվ միջազգային կոնվենցիաների և ստորագրել դրանցից բխող իրավական ակտերը:

Կենսաբազմազանության կոնվենցիայի շրջանակներում քննարկվող կարևոր հարցերից է կենսաբանական անվտանգությունը: Կենսաբազմազանության մասին արձանագրության ընդունումը կարևոր քայլ դարձավ կենսատեխնոլոգիայի անվտանգ ժամանակակից մեթոդների կիրառման ապահովման, մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա անբարենպաստ ազդեցության կանխարգելման համար:

Ստահոգիչ է հանրապետության խոշոր քաղաքներում տրանսպորտային արտանետումների խնդիրը, որոնք վնասում են մարդկանց, հատկապես կանանց առողջությունը և, որպես հետևանք, աշխատանքային գործունեությունը:

Այդ հիմնախնդրի լուծման նպատակով մշակվել և ՀՀ կառավարության 14.10.2004թ. թիվ 40 արձանագրային որոշմամբ հաստատվել է ավտոտրանսպորտից վնասակար արտանետումների նվազեցման հայեցակարգը, որը կյանքի կոչելու համար 2005 թվականին կմշակվի «Ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների նվազեցման միջոցառումների ծրագիրը»:

Հանրապետությունը 1999թ. վավերացրեց ՄԱԿ-ի Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին Բազելի կոնվենցիան: Կոնվենցիայի պահանջներին համապատասխան, հանրապետությունում կանանց ակտիվ մասնակցությամբ իրականացվում է գոյացող, ներմուծվող, արտահանվող, տարանցիկ փոխադրվող թափոնների, ինչպես նաև այդ գործունեության ոլորտում ներգրավված արդյունաբերական ձեռնարկությունների հաշվառում և հսկողություն:

Քիմիական նյութերի և թափոնների կառավարումը միջազգային նորմերին համապատասխանեցնելու նպատակով անհրաժեշտ է կատարելագործել ազգային օրենսդրությունը, ներդնել այնպիսի իրավական նորմեր, որոնց շնորհիվ կիրականացվի պատշաճ վերահսկողություն:

Թափոնների գործածության բնագավառում երկրի պետական քաղաքականությունը սահմանելու նպատակով մշակվել և ընդունվել է «Թափոնների մասին» ՀՀ օրենքը:

Թափոնների գործածության ոլորտը, ներառյալ Հայաստանի Հանրապետության տարածք վտանգավոր թափոնների ներմուծումն ու հանրապետության տարածքից արտահանումը կարգավորելու և դրանց ապօրինի շրջանառությունը կասեցնելու նպատակով մշակվել և հաստատվել են.

- «ՀՀ կառավարության 1995թ. դեկտեմբերի 8-ի N97 որոշմամբ նախատեսված կարգավորվող և չկարգավորվող թափոնների, դրանց վտանգավոր հատկությունների ցանկերի, հայտավորման, ծանուցման և հեռացման գործողությունների մասին փաստաթղթերը» (ՀՀ բնապահպանության նախարարի 10.08.1999թ. թիվ 96 հրաման),
- «Վտանգավոր թափոնների անդրասահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելի կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության 02.03.2000թ. թիվ 97 որոշումը,
- «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 30.01.03թ. թիվ 121-Ն որոշումը,
- «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման միջգերատեսչական հանձնաժողովի կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի 05.02.04թ. թիվ 46-Ն որոշումը,
- «Հայաստանի Հանրապետության վտանգավոր թափոնների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 20.05.2004թ. թիվ 874-Ն որոշումը,
- «Հայաստանի Հանրապետության կառավարության 1995 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 97 որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության արգելված վտանգավոր թափոնների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 8.07.2004թ. թիվ 1093-Ն որոշումը:

ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից մշակված «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքի նախագծի (արժանացել է ՀՀ կառավարության հավանությանը և այժմ գտնվում է Ազգային ժողովում) 6-րդ հոդվածի 15-րդ կետում ներառված է համապատասխան դրույթ՝ «Ջրի ազգային քաղաքականության սկզբունքները», որով, բացի ՀՀ ջրային օրենսգրքով սահմանված սկզբունքներից, ջրային ռեսուրսների կառավարումը պետք է ապահովվի հետևյալ սկզբունքների իրականացմամբ. ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի թափանցիկ և մասնակցային

եղանակով կառավարում, ինչպես նաև գենդերային քաղականության սկզբունքների իրականացում, կառավարման հետ կապված հասարակության լուսաբանում, այդ գործընթացին կանանց մասնակցության հնարավորության ապահովում:

1995 թվականից ՀՀ բնապահպանության նախարարությունում ակտիվացել են կանանց ներգրավման աշխատանքները Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող նախագծերի մշակման, հաստատման և իրականացման գործընթացներում:

1995թ. Պեկինում կայացած կանանց իրավիճակի 4-րդ համաժողովի կողմից ընդունված գործողությունների ծրագրի 253 շ կետի ուղղությամբ 2002 թվականից իրականացվում է «Կովկասի էկոնեգիոնում դեղաբույսերի կայուն օգտագործման զարգացում» ծրագիրը (WWF-ի ֆինանսական աջակցությամբ): Նշված ծրագրի շրջանակներում Գեղարքունիքի մարզում ստեղծվել է «Բուսաբույժ Նանա» արտադրական ձեռնարկությունը, որը իրեն պատկանող փորձնական պլանտացիաներում արտադրում, մթերում և վերամշակում է մի շարք դեղաբույսեր՝ դրանով իսկ մեղմացնելով մարդածին ճնշումը բնական էկոհամակարգերի վրա, և նպաստելով աղքատության նվազեցմանը: Ձեռնարկության աշխատակիցների մեծ մասը (բացառությամբ 1-ի) կանայք են:

2002թ. ՄԱԿ-ի Անապատացման դեմ պայքարի կոնվենցիայի շրջանակներում մշակվել է «Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիրը», որի մշակման աշխատանքներին մասնակցել է 13 կին (ընդհանուր թվի 31%-ը): Միջոցառումների (սեմինարներ, լուսններ, հանդիպումներ) մասնակիցների ընդհանուր թվի մոտ 50%-ը կանայք են:

Հայպետհիդրոմետի համակարգում աշխատակիցների մեծ մասը կանայք են, որոնք հատկապես վերջին տարիներին ավելի ու ավելի ակտիվորեն են մասնակցում հիդրոոդերևութաբանական աշխատանքների զարգացման և բարեփոխման գործին: Հատկապես մեծ է նրանց թիվը օդերևութաբանական կայաններում: Ամբողջությամբ կանացի կոլեկտիվներ են ծառայության այնպիսի ստորաբաժանումներում, ինչպիսիք են եղանակի կանխատեսումների, կլիմայի, օդերևութաբանության, ագրո-ոդերևութաբանության, հիդրոլոգիական ռեժիմային և կանխատեսող բաժինները:

Կանայք հանդիսանում են տարբեր միջազգային ծրագրերում հայաստանյան կողմը ներկայացնող համակարգողներ, ակտիվ մասնակցություն ունեն հիդրոոդերևութաբանական և կլիմայական տեղեկատվության գործընթացում: Համակարգում ներկայումս աշխատում է ավելի քան 350 կին, որը կազմում է աշխատակիցների ավելի քան 60%-ը, նրանցից 170-ն ունեն բարձրագույն կրթություն, 50-ը հանդիսանում են կոլեկտիվների ղեկավարներ, 65-ը զբաղեցնում են մասնագետների հաստիքներ:

Հայպետհիդրոմետում հնարավորության սահմաններում ապահովվում է համակարգի կին աշխատակիցների մասնակցությունը միջազգային ֆորումներին, անձնակազմի գիտական մակարդակի բարձրացմանը, փորձի փոխանակմանը, համաշխարհային առաջավոր փորձի ներդրմանը:

Ներկա ժամանակահատվածում Հայաստանում արդիական է համարվում տնտեսական նոր կացութաձևի՝ շուկայական հարաբերությունների պայմաններում շր-

ջակա միջավայրի՝ օդային, ջրային ավազանների, հողի, անտառների կենսաբազմազանության պահպանման իրավական նորմերի երաշխավորումը, էկոանվտանգության բարձրացումը, հնարավոր էկոռիսկերի կանխատեսումը և չեզոքացումը կամ նվազեցումը, քանի որ այս ամենի ապահովումը նպաստում է կանանց և հետագա սերունդների առողջության պահպանմանը:

XII. Կինը և զանգվածային լրատվամիջոցները

Հասարակական գիտակցության ձևավորման, հատկապես կնոջ օրինակելի կերպարի ձևավորման գործում շատ մեծ է ՉԼՄների դերը:

Թեև կանանց հիմնախնդիրները ներկայացվում են ՉԼՄ-ների կողմից, սակայն բավարար չափով չեն լուսաբանվում կանանց կյանքի իրական բարդությունները, հասարակական կյանքին կանանց լիարժեք մասնակցությանը խանգարող պատճառները: Ըստ արժանվոյն չի ներկայացվում նաև հասարակական, քաղաքական, մշակութային կյանքում նրանց կատարած ներդրումը: ՉԼՄ-ների կողմից կանանց հիմնախնդիրների ներկայացման ձևը երբեմն մերժողական է և նսեմացնող:

Բացասական դեր են խաղում գեղագիտական առումով էժանագին, կնոջ արժանապատվությունը վիրավորող պատկերներով լեցուն հեռուստահաղորդումները, ֆիլմերը, հեռուստասերիալները և տարբեր կարգի շոուները, որոնք հաճախ քարոզում են ընտանեկան և հասարակական հակասությունների լուծման բռնի և ոչ քաղաքակիրթ մեթոդներ, ինչպես նաև նպաստում են հասարակության բարոյական անկմանը և անընդունելի բարքերի ձևավորմանը:

Գովազդներում կինը հաճախ ներկայացվում է որպես ապրանք, մինչդեռ արվեստի և լրատվամիջոցների խնդիրը նաև կնոջ և տղամարդու դրական իդեալների ձևավորումն է ու բացասական կարծրատիպերի հաղթահարումը: Այստեղ մեծ գործ ունեն անելու մասնավորապես հեռուստարձևերությունները, որոնք չպետք է անտեսեն իրենց թողարկումներում կնոջ և տղամարդու առանձնահատկություններն ու տարբերությունները:

Այս ոլորտում առկա հիմնախնդիրները հաղթահարելու համար ՀՀ կառավարությունը նախատեսել է մի շարք միջոցառումներ.

- ապահովել կանանց հիմնահարցերի արդյունավետ լուսաբանումը, ինչպես նաև կնոջ և տղամարդու օրինակելի կերպարի ձևավորմանն ուղղված հաղորդումների և հրապարակումների թողարկումը հանրային լրատվամիջոցներով,
- օժանդակել մասնավոր ՉԼՄներով կանանց հիմնախնդիրների լուսաբանմանը,
- նպաստել հասարակական գիտակցության մեջ կնոջ և տղամարդու կերպարի ձևավորմանը և կնոջ հեղինակության բարձրացմանը,
- ապահովել ՉԼՄների, ինտերնետի և հոգևորմշակութային հիմնարկների միջոցով կնոջ արժանապատվությունը ոտնահարող տեղեկատվության տարածման գործընթացի վերահսկողությունը: